



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Utopia v

270, 282

Մոյսու Արտ-Քրտկարչ 3

Սերիք
270
մ.

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՏԱՐԵՐԲԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ

826

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ



ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՂ-ՂԵԻՈՆԴԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՒՒՆ:



ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ:
1888

11975

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Ա. ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՔԻ
- Բ. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ.
- Գ. ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ.
- Դ. ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆԸ և ՆՈՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ:

Ա.

1. Առարկայ.
2. Շնչաւոր և անշունչ առարկաներ.
3. Մտաւոր և նիւթական առարկաներ.
4. Առարկայի թիւը.
5. Առարկայի որպիսութիւնը.
6. Որպիսութեան թիւը.
7. Առարկայի գործողութիւնը.
8. Գործողութեան թիւը:

Բ.

9. Բառ և վանկ. հնչիւն և տառ.
10. Վանկերու էական կանոնները.
11. յ տառի ուղղագրութիւնը.
12. Վ և ւ տառերի ուղղագրութիւնը.
13. ու և ն երկբարբառների գործածութիւնը.
14. ու և օ տառերի ուղղագրութիւնը.
15. է և է տառերի ուղղագրութիւնը.

Աղիւսակ վերլուծութեան:

Գ.

16. Ենթակայ.
17. Ստորոգեալ.
18. Պարզաբանող բառեր.

} Նախադասութիւն.

Աղիւսակ վերլուծութեան:

Դ.

19. Համառօտ և ընդարձակ նախադասութիւն.
20. Պարզաբանող բառերի տեսակները. որոշող, լըրացնող, բացառադրիչ և պարագայական բառերը և նոցա տեսակները. կոչական բառեր.
21. Պարզ և միաւորեալ նախադասութիւններ.
22. Բաղադրեալ նախադասութիւն. նախադասութեան ուղղագրութիւնը:

Дозволено цензурою. 1 Октября 1887 года, г. Тифлисъ.



270-2003

(3837)
41

28 269

Типогр. Ротинянца. голов. прос. д. №41.

Յ Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն

Մարեմի լեզուի քերականութեան «Տարերքը» երեք գրքուկից պիտի բաղկանայ՝ երրորդ, չորրորդ և հինգերորդ տարուաչ ուսմունքը: Սոյն հրատարակութիւնը երրորդ տարուաչ ուսմունքն է:

Կար ժամանակ, երբ քերականութիւնն ուսման և գիտութեան վերջակէտն էր ընդունւում, երբ նա համարվում էր մի արուեստ, մի դժուարին և միայն ընտրեալներին մերձենալի արուեստ: Բայց այդ վաղ էր: Այժմ գիտակցական ուսումնս ապացուցանում է, որ կարգալ-գրելն ինքնին ոչ այլ ինչ է, եթէ ոչ քերականական նախապատրաստութիւն: Այսպիսով՝ տարրական քերականութիւնը քերականի (այլ-բեմարանի) հարագատ եղբայրն է հանդիսանում: Եւ ես կարծում եմ, որ մեր նախնիքը, երևի, մի մերձաւոր կապ են գտել քերականի և քերականութեան մէջ, որ երկուսին էլ միևնոյն, համարեա միևնոյն անունն են տուել: Իսկ ինչ որ մեր նախնիքը սորանից տասն և հինգ դար առաջ հասկացել են, մեզ աններելի է չհասկանալ այժմ:

Եթէ արդարև քերականութեան պաշտօնն այն է, որ քերականի միջնորդութեամբ հաղորդուած լեզուագիտական տարրական գիտելիքները փոքր առ փոքր, աստիճան առ աստիճան կոկէ, լրացնէ, կարգաւորէ և վերջապէս ամբողջացնելով՝ մի ընդհանուր համակարգութեան վերածէ, ապա պէտք է ենթադրել, որ քերականութեան ուսումնս իսկապէս սկսվում է տառածանօթութեան հետ նոյն իսկ առաջին տարուց. ուրեմն և այն քերականական դործնական վարժութիւնները, որ մենք առաջարկում ենք որպէս երրորդ տարուաչ ուսմունք, կանխաժամանակեաց կամ անգործադրելի չ'պիտի համարուին:

Ընթերցողը կընկատէ, որ մենք քերականական և լեզուաբանական կանոնները բացառելիս՝ երկու միջոց ենք գործ դրել. նախ՝ զրել ենք օրինակները և

այդ օրինակներից արտադրել ենք կանոններ. երկրորդ՝ կանոններն աւանդելուց յետո՛ւ՝ ամեն մի կանոնի համար տուել ենք բազմաթիւ վարժութիւններ (հրահանգներ), որոնց գործադրութեամբ կանոնները պիտի հիմնաւորապէս արմատանան մանուկների չիչողութեան մէջ:

Կանոններն ու եզրակացութիւնները տպագրվում են խոշոր տառերով, իսկ վարժութիւններն ու օրինակները համեմատաբար աւելի մանր տառերով:

յ, օ, ո, է, է, —, վ, ու, է— տառերի ուղղագրութիւնը մենք՝ որքան կարողացանք, ամփոփեցինք մեր աւանդած վարժութիւնների մէջ: Սա, իհարկէ, մի փորձ է, որ առանց պակասութեան չի կարող լինել: Մենք առաջարկում ենք մեր պատուելի ուսուցիչներին՝ մեր առաջարկած վարժութիւններից օգուտ քաղելով, պատուիրել աշակերտներին, որ իրանց ընդհանուր տեսրակների մէջ կազմեն յ, օ, է տառերով գրուող բառերի այբբենական աղիւսակը: Յիշեալ աղիւսակները կազմելուց յետո՛ւ՝ ուսուցիչը պիտի հսկէ, որ եթէ այդ տառերով գրուած որեւէ բառ հանդիպի աշակերտներին, որ մեր տուած վարժութիւնների մէջ չէ վիշուած, նորա ուղիղ լինելն ստուգելուց յետո՛ւ, աւելացնեն իրանց կազմած աղիւսակին: Մենք կարծում ենք, որ այդպիսի դիպուածներ շատ չեն լինիլ: Այսու ամենապէս եթէ մեր ուսուցիչները տարուայ վերջին իրանցից աւելացրած բառերի ցուցակը շնորհ անեն ուղարկել մեզ, անչափ կը պարտաւորեն: Մի մարդ՝ որքան և աշխատէր, մշակուած աղբիւրներ չ'ունենալով աչքի առաջ, ըստ անպնի կատարեալ և պակասութիւններից զերծ գործ չէր կարող չառաջացնել: Թող մեր պ. ուսուցիչները՝ փոխանակ չարախնդաց ժպիտ արձակելու՝ այսպիսի մի գործի մէջ որևիցէ պակասութիւն տեսնելիս, իրանց խոնհոմ նկատողութիւններով նպաստեն մեզ: Ո՛չ ապաքէն սա իրանց սիրելի աշակերտների և նոյն իսկ իրանց թեթևութեան համար է յօրինվում:

Ա.

Ա Ռ Ա Ր Կ Ա Յ.

Մարդս հինգ արտախն զգայարաններ ունի՝ պէտքերն էլ (տես լինի), հոգոտն էլ, ճաշակն էլ և շօշափելն էլ:

ա. Դասատանը մենք տեսնում ենք՝ աշակերտ, վարժապետ, սեղան, աթոռ, նստարաններ, գրասեղաններ, գրատախտակ, քարեսախտակ, լուսամուտներ, դուռը...:

Տանը մենք կարող ենք տեսնել հայր, մայր, եղբայր, քույր, սենեակներ, իսկ սենեակների մէջը...:

բ. Նրբ անձրև է գալիս՝ մենք լսում ենք՝ որոտումն, շառաչիւն, գոչիւն. եկեղեցում—դպիրների երգեցողութիւն, քահանաների ընթերցանութիւն, զանգակի հնչիւնը. դաշտումը—սոխակի դալավիկը, թռչունների ծվլոցը. փողոցում—մարդկանց ձայնը, խօսակցութիւնը, աղաղակը, երգը, կոխը...:

գ. Ճաշակելով մենք կարող ենք ճանաչել աղը, շիբը, շաքարը, գինին, քացախը, ջուրը, թէյը, սուրճը, մածուը...:

դ. Հոտոտելով ճանաչում ենք՝ վարդը, մեխակը, ռեհանը, շուշանը, մանուշակը, խունկը...:

ե. Շօշափելով ճանաչում ենք՝ գնդակը, բամբակը, փետուրը, բուրդը, ձիւնը, հացը...:

§ 1. Հինգ զգայարանքների միջնորդութեամբ ճանաչած բաները կոչվում են սուսմանք: — Աշակերտ, հայր, քույր, երգ, շա-

քար, բամբակ, վարդ, և այլն—առարկաներ են:

Վարժուկներ 1. Ի՞նչ առարկաներ ենք տեսնում եկեղեցում, դաշտում, անտառում, փողոցում, գետի մոտ, գետի մէջ, արտերում, գոմերում:

Ի՞նչ առարկաներ են շինվում փայտից, երկաթից, կաւից, սղինձից, ապակուց:

Ի՞նչ առարկաներ ենք ուտում: Ի՞նչ ենք խրճում: Ի՞նչ ենք հագնում:—Բերանացի:

§ 2. Կան առարկաներ, որոնք մի քանի մասից են բաղկացած:

2. Ո՞րոնք են սեղանի, լուսամուտի, ծառի կովի, հաւի մասերը: Ի՞նչ մասեր ունի գլուխը, իրանը, ոտները, ձեռները:—Բերանացի:

§ 3. Մարդս առարկաներին շուրջով անուն է տալիս. ամէն առարկայ իւր անունն ունի: Առարկայի մասերն էլ շուրջով անուններ ունին:

Մարդս այն ժամանակն է առարկայի անունը տալիս, երբ որ իւր տեսածի և ճանաչածի մասին ուրիշներին մի բան է ուզում ասել:

Առարկան տեսնում և զննում ենք մեր

հինգ զգայարանքներով, իսկ անունը չենք կարող տեսնել և զննել. նորան միայն լսում ենք և հասկանում: Առարկաների անունները մեր տեսողութեանը ենթարկելու համար՝ նոցա 4-րդ են: այսինքն տառերով նշանակում ենք:

3. Վերևի երկու վարժուկիւնների պատասխանները ներկայացրէք զրաւոր՝ առաջ ամբողջ առարկաների անունները զրեցէք, յետոյ նորանց մասերի անունները:

ՅՆՉԱՒՈՐ ԵՒ ԱՆՇՈՒՆՉ ԱՌԱՐԿԱՆԵՐ.

Յա. Ոչխար, շուն, կատու, ձի, հաւ, կով, գոմէջ, աշակերտ, քահանայ:

Աբ. Սեղան, քար, աթոռ, փայտ, կերակուր, այգի, գիրք, եկեղեցի:

§ 4. Առաջին տողի մէջ նշանակած բառերը կենդանի առարկաների անուններ են. այդ առարկաներն ազատ կարող են մի տեղից միւս տեղ անցնիլ, իրանս իրանց րեղը փոխել: Դուքա շնչաւոր առարկաներ են:

Երկրորդ տողի մէջ նշանակած բառերը անկենդան առարկաների անուններ են:

Այդ առարկաներն իրանց կամքով չեն կարող մի տեղից միւս տեղ անցնիլ, իրանք իրանց տեղը փոխել: Գուքա անշունչ առարկաներ են:

4. Ի՞նչ շնչաւոր առարկաներ էք տեսնում տանը, բազումը, գոմումը, անտառումը:

Ի՞նչ անշունչ առարկաներ էք տեսնում դասատանը, պարտիզումը, այգիումը, դաշտումը, ուսումնարանումը, եկեղեցումը: — Բերանացի:

5. Հետեւեալ բաւերից ջոկեցէք և գրեցէք առաջ շնչաւոր առարկաների անունները, յետոյ անշունչներինը. — կացին, գիւղացի, սրոց, սղոց, դարբին, հովիւ, մօւրձ, աղասիին, կողպէք, ծառայ, աղաւնի, խոզ, հաւ, հաւաքուն, մեխ, այգի, այգեպան, հաց, հացթուխ, սրահ, գոմ, ձի, կով, եզր, ոչխար, օրօրոց, մանուկ, անկողին, մահճակալ, ըզգեստ, դերձակ, ասեղ, կօշկակար, կօշիկ, սիսեռ, կազամբ, համեմ, կարմրախայտ, լոր, մեղր, մեղու, ճանձ, ծառ, մոծակ, բղէղ, խոտ, հիւնձող, մանգաղ, ձեռներ, ոտներ, աչեր, այծ, սագ, բագ, եղջիւր, եղջերու, աղուէս, միս, պանիր, աքաղաղ, նապաստակ:

6. Հետեւեալ օրինակներից արտագրեցէք առաջ անշունչ առարկաների անունները, յետոյ շնչաւորներինը: — Գայլին կերակրում են իւր ատամները իսկ բազէին — կտուցն ու ճանկերը: Ձին

պաշտպանվում է սմբակներով, գոմէշը եղջիւրներով, շունը ասամներով, կատուն եղունգներով, մեղուն խայթոցով:

Հաւը խօսեցաւ, օրը բացուեցաւ, արևն էլ վաղուց ելաւ բարձրացաւ: Խելօ՛ք մանուկների, շատ հագնուեցէք, շուտով դասատուն դուք հաւաքուեցէք: Մարդ և անասուն, գազան և թռչուն, ամենքն էլ իրանց գործին են գնում: Մըջիւնը բերնով կերակուր տանում, մեղուն ծաղկիցը հիւթեր է ծծում: Գաշար գոյնգոյն ծաղկով զարդարուած, մարդագետինը կանաչ հագնուած, անտառը ձմեռուայ քնից արթնացած՝ իւր տերևները շարժում է կամաց:

Ձկնորաներն իրանց ուռկանն են քաշում, հրնձողներն իրանց մանգաղը շարժում: Գուք էլ մանուկների, ձեր գրքերն սուէք, Աստուած ծուլու թիւն չէ սիրում երբէք:

ՄՏԱԻՈՐ ԵՒ ՆԻԻԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ.

ա. Հոգի, հրեշտակ, Աստուած, ապրուստ, եռանդ, աշխուժ, աշխատանք:

բ. Արօր, սեղան, արագաղ, մարդ, բաժակ, ալիւր, կաքաւ, կաղամբ:

§ 5. Առաջին սիւնակի մէջ նշանակած առարկաները թէև կան և անուն ունին, բայց մեր հինգ զգայարանքներին

ենթակայ չեն. դորանց մենք միայն հարու
ենք ճանաչում: Դուքա հոտոօր առարկա-
ներ են:

Երկրորդ սիւնակի մէջ նշանակած ա-
ռարկաները շնչաօր և անշունչ առարկաներ
են. դոցա ճանաչում ենք մեր հինգ զգայ-
արանքների միջնորդութեամբ: Դուքա կոչ-
վում են նաև նիւթակն առարկաներ, որով-
հետև կազմուած են որևէ նիւթից:

7. Հետևեալ խօսքերից ջոկեցէք մտաւոր ա-
ռարկաները նիւթականից, նիւթականներն էլ եր-
կու խումբի բաժանեցէք՝ շնչաւոր և անշունչ:

Աստուած ստեղծեց մարդուն և առեց նորան
հոգի, միտք և կամք, որ կարողանայ սեպհական
խելքով իրան համար ապրուստ ձարել: Մարդը հը-
նարեց արօրը, երկիրը վարեց, հացահատիկներ ցա-
նեց, կացին հնարեց՝ իւր ասն ու վառելիքի հա-
մար փայտ կտրատեց, սանձ ու թամբ հնարեց և
իրանից ուժեղ կենդանիներին հնազանդեցրեց,
միտք բանացրեց և շատ անասուններ, գործիք ու
սարք ունեցաւ: — Բարի մարդը իւր կարողութիւ-
նից ալքատին փող, ծարաւին ջուր, քաղցածին
հաց և տկորին շոր է տալիս: Ասածու հրեշտակն
օգնում է բարի մարդուն:

Բերանացի՝ գրաւոր:

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԻՒՆ.

ա. Հաց, քար, ծառ, պատ, միս, մոմ, աղ, մազ՝
ձեռ, ոտ:

Կացին, սեղան, քորոց, աշակերտ, կերակուր, եկե-
ղեցի, քահանայ, մատանի:

Բ. Հացէր, քարեր, ծառեր, պատեր, մներ, մոմեր,
աղեր, մաղեր, ձեռ-*, ոտք:

Կացին-ներ, սեղաններ, քորոցներ, աշակերտներ,
կերակուրներ, եկեղեցի*, քահանայք, մատանիք:

§ 6. Առաջին երկու տողի մէջ եղած
բառերից ամէն մինը մի հարի առարկայի
անուն է՝ մի հաց, մի քար, մի կացին,
մի եկեղեցի:

Երկրորդ երկու տողի մէջ եղած բա-
ռերից ամէն մինը մի հարի միատեսակ ա-
ռարկայի անուն է՝ շատ հացեր, շատ քա-
րեր, շատ կացիներ, շատ եկեղեցիք:

Միւսնուն անունը շատ առարկաներ
ցոյց տալիս՝ էր, ներ և * տառերն է առ-
նում վերջիցը:

8. Հետևեալ խօսքերի մէջ մի առարկայի ա-
նունը ջոկեցէք շատից: Հայրս գնաց փողոց և գնեց
միս, հացեր, հաւեր, բազ, և հնգկահաւեր: Աշա-
կերտները կաւիճ գնեցին և գրատախտակի վերայ

դասը գրեցին: Գիւղացիք արտերը վարեցին: Քահանայքը եկեղեցում ժամ ասացին: Դաշտում արածուժէին կովեր, եզներ, այծեր, ոչխարներ և ուրիշ շատ կենդանիք: Գարբինը շինուժէ կացին, բահ, խոփ, մանգաղ, ուրագ և ուրիշ բաներ: Զուհակը շալ գործեց, բրուտը շինեց կժեր, սրուակների, գաւաթներ: Հաւը ձու է ածում: Կովը կաթն է տալիս: Աշակերտը գնեց մատիտ, քանոն, գրիչ, թանաքաման և գրչաման: Հայկը պայուսակ ունի: Արամը կարկին ջուներ: Բոլոր աշակերտները քանոններ ունին: Ոչ մի աշակերտ տողացանց չ'ունի:

Բերանացի՝ գրաւոր:

9. Բոլոր ջոկած առարկաները փոփոխեցէք՝ մէկը շատի դարձրէք, շատը մէկի, հետեւեալ կարգով՝ հայրս—հայրերս, փողոց—փողոցներ, միս—մսեր, հացեր—հաց և այլն:

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆԸ.

ա. Կարմիր խնձոր, սպիտակ շաքար, թթու քացախ, սև թանաք, կապույտ ծաղիկ:

բ. Ոսկէ մատանի, քարէ եկեղեցի, արաբական ձի, հիւսիսային եղջերու, առաւօտեան հով:

§ 7. Առաջին և երկրորդ տողերի մէջ նշանակած բառերը՝ կարմիր, սպիտակ, արաբական, հիւսիսային... ոչ առարկաների անուններ են և ոչ նոցա մասն-

րի. նոքա դրուած են առարկաների համար և ցոյց են տալիս նոցա որպիսո՞ւնի՞նք կամ յարկո՞ւնի՞նք:

§ 8. Մարդս իւր զգայարանքների միջնորդութեամբ ոչ միայն առարկաներն է ճանաչում, այլև նոցա որպիսո՞ւնի՞նք (թէ առարկան ի՞նչպիսի է):

Որպիսութիւնն առանց առարկայի չի կարող լինել: Որպիսութիւնն էլ, առարկայի պէս, իւր անուն ունի:

10. Հետեւեալ օրինակներից ջոկեցէք առաջ առարկաների, յետոյ նոցա որպիսութիւնների անունները:—Սև կուպր, կարմիր գինի, կանաչ խոտ, պայծառ արև, փայլուն աստղ կապոյտ երկնակամար, փայտեայ կլոր գաւաթ, անտառային թթու խնձոր, դաշտային խորամանկ աղուէս, փոքրիկ երկչոտ նապաստակ, թունաւոր սև օձ, եղջերաւոր խոշոր անասուն, հարաւային տաք քամի, հիւսիսային սառնաբեր փոթորիկ, պողպատէ սուր մանգաղ, քարէ լայն ուղի, ծուռ նեղլիկ շաւիղ, հին խոր ջրհոր, տերեւաշատ խիտ անտառ, քառակուսի գեղեցիկ սեղան, մազէ երկար թոկ, բրդէ փափուկ գուլպայ, արծաթէ պսպղուն դրամ, պարսկական թանկագին գորգ:

11. Որպիսութիւն ցոյց տուող անունների տակը զի՞ծ քաշեցէք: — Պայծառ երկնահամարի վերայ գորշագոյն ամպեր երևեցան: Ամպերը թանձրացան և սև կեղևով ծածկեցին կապոյտ երկինքը: Երեկոյին՝ կենսատու անձրևը ջրեց ծարաւ երկիրը: Կաշտային թառամած բոյսերը զուարթացան. նորանք իրանց բարակ արմատներով թաց հողից դուրս ծծեցին սննդարար հիւթը: Ծառերի վայլուն տերևներն ագահաբար ներս ծծեցին խոնաւ օդը: Յորենի և զարու արաերն իրանց քսաալի հասկերի նիհար հատիկները լցրին կշտացրին:

12. Հետևեալ առարկաների մօտ դրէք իրանց պատշաճ որպիսութիւնների անուններ: — Ամպ, գունա, շուն, թիթեռ, խնձոր, ջուր, կապիկ, ապակի, քամի, զրիչ, անիւ, խուրձ, խոտ, արև, ոսկի, արծաթ, ածուխ, քար, բամբակ, հաց:

§ 9. Մի առարկայ կարող է նաև մի քանի որպիսութիւն ունենալ: — Կանաչ, արևախիտ, բողբոջաձև, ճիւղ, սոսնձաշառ ուռենի:

13. Ի՞նչ յատկութիւններ կարող են ունենալ հետևեալ առարկաները՝ ճանապարհ, տուն, զարուն, ամառ, աշուն, ձմեռ, ջուր, շաքար, ապակի: — Բերանացի և զրաւոր:

Ի՞նչ յատկութիւններ կարող է ունենալ մարդս: — Բերանացի և զրաւոր:

§ 10. Մի քանի առարկաներ կա-

րող են միևնույն որպիսութիւնն ունենալ. — վնասակար գալլ, վնասակար աղուէս, վնասակար մարդ, վնասակար գործ. բարչք ձայն, բարչք ծառ, բարչք մարդ, բարչք արժանաւորութիւն:

24. Հետևեալ որպիսութիւններն ի՞նչ առարկաների կարելի է յատկացնել. կարմիր, սպիտակ, սև, կանաչ, կապոյտ, քաղցր, դառը, սուր, պինդ, փափուկ, կլոր, հիւթաւոր, թափանցիկ, ծանր, թեթև, մաքուր: — Բերանացի. զրաւոր:

15. Ի՞նչ առարկաների չի կարելի յատկացնել հետևեալ յատկութիւնները՝ փխրուն, գիւրավառ, դիւրաբեկ, հոտաւետ, ցամաք, կոկ, եռանկիւնի, տափակ, բարի, օգտակար: — Բերանացի. զրաւոր:

16. Ի՞նչպիսի որպիսութիւններ չի կարելի յատկացնել հետևեալ առարկաներին՝ արև, ածուխ, գալլ, նապաստակ, կրակ, քար, շաքար, փետուր, աղուէս, օձ: — Բերանացի և զրաւոր:

17. Հետևեալ առարկաներից ամէն մինը ի՞նչ յատկութիւններ պիտի ունենայ անպատճառ. սոխը, սխտորը, արծաթը, ոսկին, պղինձը, շուշանը, մանուշակը, զանգակը, գետի ջուրը, ծովի ջուրը, բամբակը, արձիճը, մեղրը, քացախը: — Բերանացի, ապա զրաւոր:

18. Ի՞նչ առարկաներ գիտէք որոնք միշտ ունենում են հետևեալ յատկութիւնները. ուժեղ

3837 / 826270-2003



Ֆինասակար, օգտակար, ամուր, կակուղ, հոտուէտ, դիւրաբեկ, դիւրավառ, անուշ, դառն, կարմիր, սպիտակ, հոսանուտ: — Բերանացի՝. գրաւո՛ր:

19. Գրեցէ՛ք այնպիսի որպիսութիւնների անուններ, որոնց ճանաչելիս լինինք տեսանելիքի, լըսելիքի, ճաշակելիքի, հոտոտելիքի և շոշափելիքի միջնորդութեամբ:

20. Անուանեցէ՛ք այնպիսի որպիսութիւններ, որոնք ցոյց են տալիս առարկայի գոյնը, ձևը, նիւթը, ո՛ր տեղի և ո՛ր ժամանակի լինելը: — Բերանացի՛:

21. Որպիսութիւն ցոյց տուող բառերի տակը գիծ քաշեցէ՛ք: — Անձրևային աշուն: Աշնանային անձրև: Փոթորկալի ծով: Ծովային փոթորիկ: Կաշտային ծաղիկ: Ծաղկաւէտ դաշտ: Անձրևոտ ամառ: Ամառային անձրև: Մարդկային արժանաւորութիւն: Արժանաւոր մարդ: Կենդանական բնութիւն: Բնական կենդանի:

22. Որպիսութեանը նայելով՝ ճանաչեցէ՛ք առարկաները: — Հեղուկ, հոսանուտ, թափանցիկ, անհամ: Կլոր, ամուր, սպիտակ, երկնքից վայր ընկնող: Կլորակ, դեղին, աշխարհի սիրելին: Գեղեցիկ, անուշահոտ, ձեռք ծակող: Կլոր, կարմրաթշիկ, քաղցրահամ: Պողպատէ, սուր, շողջողուն և կարկոր: Կանաչ յինած, կարմիր գործած, սև կարած ¹⁾:

¹⁾ Հանելուկ, որ նշանակում է մուշ—սև մար:

Գարնանը դաշտումը տեսայ մի ծաղիկ,
Կանաչ թերթիկ ունէր և կապոյտ աչիկ:
Խոտերի մէջ հազիւ նա տեսնվում էր.
Թէև համեստ ծաղկած՝ սիրուն հոտ ունէր: ¹⁾

ՈՐՊԻՍՈՒԹԵԱՆ ԹԻԻԸ.

ա. Կարմիր խնձորներ, երկար քանոններ, սպիտակ թղթեր, կանաչ չուլունքներ, գիւղացի մարդիկ, դաշտեցի բնակիչներ:

բ. Կարմիր-ները, երկարները, սպիտակները, կանաչները, գիւղացի-ք, դաշտեցի-ք:

§ 11. Որպիսութիւն ցոյց տուող բառերը թիւ չունին, եթէ առարկայի մօտ են դրուած. բայց եթէ մենակ են, կարող են առարկաների անուան պէս երևիլ և տառերն առնել իրանց վերջերում և շատի համար գործածուիլ:

23. Հետևեալ օրինակների մէջ գտէք մենակ գործածուած որպիսութիւն ցոյց տուող բառերը և տակները գիծ քաշեցէ՛ք: — Հայրս գնեց գեղեցիկ գրիչներ. նորանցից փոքր-երը ես վերցրի, իսկ մեծերը քրոջս տուի: Մայրս մեզ համար թաժայ գաթեք թխեց. ինձ տուեց մեծը, իսկ եղբորս փոքրը: Հիւանդները նախանձում են առողջներին: Հարուստները պարտաւոր են օգնել աղքատներին: Գիտունները տգէտներին սովորեցնում են: Օրէկքը

¹⁾ Մանուշակ:

պատժում է չարերին: Քրիստոսը ներում էր մեղա-
 ւորներին, բժշկում էր կազերին, կոյրերին, անդա-
 մալոյճներին, բորոտներին և դիւահարներին: Աս-
 տուած է խնամում որբերին: Ազն ու կոյրը մի
 սրնթաց առուակով պէտք է անց կենային: Ար-
 դերի մէջ ես սիրում եմ կարմիրները: Քաղաքացի
 մարդիկ թէև շատ անգամ ծաղրում են զիւղացի-
 ներին, բայց եթէ զիւղացի մարդիկը չ'ընին, քա-
 ղաքացիք հաւատա սոված կոտորուին:

ԱՌԱՐԿԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ.

Եւսը հաջում է: Եւսը-փախաւ: Եւսը կծում
 է անցուորակնին:—Թռչունը թռչում է. թռչունը խա-
 ղում է. թռչունը երգում է, բուն է շինում, ձագ
 է հանում, մեղներ բռնում, ճուտերին կերա-
 կրում:

§ 12. Նշանակած բառերը՝ հաջում է,
 քաղաքացի է, երգում է և այլն, ոչ առարկանե-
 րի անուններ են և ոչ որպիսութեան. նո-
 քա միայն ցոյց են տալիս թէ առարկան
 ի՛նչ է անում, ի՛նչ է գործում: Գոքա Գո-
 ճողու-նի-ն ցոյց տուող բառեր են:

Առարկայի գործողութիւնն էլ մարդս
 ճանաչում է իւր հինգ զգայարանքների
 միջնորդութեամբ:

§ 13. Գործողութիւնն էլ, որպիսու-
 թեան պէս, առարկայի համար է դրվում:
 Որպիսութիւնը ցոյց է տալիս թէ առար-
 կան ի՛նչպիսի է, իսկ գործողութիւնը—թէ
 նա ի՛նչ է անում:

§ 14. Ինչպէս որ առարկաներն ու
 իրանց որպիսութիւնները, այնպէս էլ ա-
 ռարկաների գործողութիւնները շոկ-շոկ
 բառերով ենք նշանակում:

24. Հետեւեալ խօսքերի մէջ գտէք գործողու-
 թիւն ցոյց տուող բառերը և նոցա տակը զի՞ծ քա-
 շեցէք: —Որսորդն սպանեց մի գայլ: Գայլը պատա-
 ռել էր հովուի ոչխարները: Կարապետը առաւօա-
 ները վեր է կենում, շորերը հագնում, երեսը լուա-
 նում, աղօթք անում և առաւօտուայ հացն ու-
 տում ու գնում զաշոր: Մանր տղաներն ուսումն-
 նարան են գնում: Ձին բեռն է կրում: Օձը սողում է:
 Զուկը լողում է: Թռչունը թռչում է: Արծիւը սլա-
 նում է օդի մէջ: Գետը հոսում է: Քամին փչում է:
 Ամպը որոտում է:

25. Գտէ՛ք առարկայի անունը, որպիսութեան
 անունը և գործողութիւն ցոյց տուող բառը:

Նուրին-Նուրին եկել է, Աջբա-հուրին եկել է,
 շիլայ շապիկ հագել է, կարմիր գօտիկ կապել է.

իւղ բերէք պորտը քսինք) ջուր բերէք զլիսին ածենք. մեր Նուրինի փայլ տուէք՝ ուտենք, խմենք, քէֆ անենք:

Անձրև', անձրև', ցած արի,

Բացո՛ւր ցորեն ու գարի.

Բացո՛ւր ծաղիկ, կանաչ խոտ,

Աւէ՛՛՛՛՛ փոշի, մաքրէ՛՛ օդ:

26. Հետևեալ բառերից իւրաքանչիւրի մօտ աւելացրէք մի յարմարաւոր գործողութիւն:— Գարբինը... հնձողը... ուսուցիչը... դերձակը... խոհարարը... ձկնորսը... հիւսնը... որմնագիրը... խառատը... ներկարարը... տակառագործը... բրուարը... որսորդը... կազմարարը... քահանան... վաճառականը...:

27. Արտագրեցէք առաջ գործողութիւն ցոյց տուող բառերը, յետոյ առարկաների անունները:— Գիւղացին մաքրում է վարելահողը, վարում է օրավարը, սերմում է ցաքանում և Աստուած կանչում, որ ժամանակին տայ արև, անձրև և օրհնէ նորա վաստակը: Գիւղացին դնում է պարտէզ, հողը մշակում, մարդեր է շինում, բանջարներ ցանում, կարտոփի սերմում և պարտիզի չորս կողմն էլ ցանկով պատում, որ անասունները չ'մտնեն, իւր աշխատանքը չ'ուտեն, չ'տրորեն: Գիւղացին էլի շատ բան է շինում, շատ գործեր գործում:

28. Ի՞նչ է անում գիւղացին ամառը, աշնանը, ձմեռը, գարնանը...

29. Ամեն մի առարկայի մօտ դրէք իւր յարմարաւոր գործողութիւնը և աւելացրէք թէ առարկան ի՞նչ բան է շինում և ի՞նչից:— Հացթուխը թխում է հացը ալիւրից: Քոյրս կարում է շապիկներ քաթանից: Գարբինը շինում է պայտեր... կոշիկարը... պղնձգործը... ոսկերիչը... նկարիչը... խոհարարը... ջաղացպանը... դերձակը... հիւսնը... ջուլհակը... որմնագիրը... ճարտարապետը... հնձողը... ձկնորսը...:

§ 15. Մի առարկայ կարող է մի քանի տարբեր գործողութիւններ կատարել:— Գիւղացին վերցրէց մանգաղը, որով փայտը և ձիու համար խոտ հնչեց: Մանուկները ժողովեցին իրանց գրքերը, դասերին պառուսակի մէջ և գրքերն վարժատուն:

30. Հետևեալ առարկաներից ամէն մինին տուէք մի քանի յարմարաւոր գործողութիւններ:— Ձին, կովը, ոչխարը, հաւը, աքաղաղը, կատուն, շունը, գայլը, ազուաւը, ծիծեռնակը, սոխակը, կիւն, մեղուն, խոզը, աղանին, գորտը, բազը, թռչունը, ձուկը, օձը, մարդը...:— Բերանացի՛ գրաւոր:

31. Ի՞նչ գործողութիւններ ենք կատարում

ձեռներով, ոսներով, քթով, ականջներով, բերանով... — Գրաւոր:

§ 16. Միեւնոյն գործողութիւնը կարող է զանազան առարկաների ձեռքով կատարուիլ:— Չուկը լողո՞՞մ է, գորտը լողո՞՞մ է, քաղը լողո՞՞մ է, մարդն էլ լողո՞՞մ է:

32. Ի՞նչ առարկաների կարող ենք յատկացնել հետեւեալ գործողութիւններից ամէն մինը:— Լոյս է տալիս (ճրագը լոյս է տալիս, կրակը լոյս է տալիս, լուսինը լոյս է տալիս, աստղերը լոյս են տալիս, արեւը լոյս է տալիս...), արթնանում է, թռչում է, բառաչում է, մայում է, հանգչում է, որոտում է, դուրս է գալիս, մայր է մտնում, վառվում է, վայր է ընկնում, փայլում է, ծաղկում է, աճում է, մեռնում է:

33. Հետեւեալ բառերից որոնք են ցոյց տալիս առարկայ, գործողութիւն և որպիսութիւն:— Մըշակ, մշակել, մշակող, մշակութիւն, Կոտրեցի, կոտրած, կոտր: Փշրանք, փշրուն, փշրում էր: Կերակուր, կերող, կերել եմ: Կրգրեմ, գիրք, գրութիւն, գրիչ, գրող: Խմիչք, խմեցի, խմած: Խելք, խելօք, խելօքացաւ: Խաղ, խաղում է, խաղասէր, խաղալիք: Մամում է, ծամ, ծամելի: Կար, կարած, կարող, կարկատան, կարեց: Կըհնձէ, հունձ, հնձող, հընձան: Չայն, ձայնաւոր, ձայնել, անձայն: Հանապարհ, ճանապարհել, ճանապարհորդ, ճանապարհորդու

թիւն: Մանուկ, մանկական, մանկանալ: Յիշատակ, յիշատակել, յիշատակող, յիշատակարան: Ներել, ներողամիտ, ներողութիւն: Շնորհ, շնորհել, շնորհած, շնորհաւորէք, շնորհաւորեցիր, շնորհաւորող: Չար, չարանալ, չարութիւն, չարչարանք, չարչարուիլ: Սուր, սրոց, սրել, Ուժ, ուժեղ, ուժեղանալ:

34. Կօշկահարը կարում է մեծ-մեծ կօշիկներ: Գերձակը ձևեց զեղեցիկ բաձկոնակ: Բարի քահանան օրհնեց աշխատասէր տղային: Գեղեցիկ գիւղ: Գիւղական փոքրիկ պարզ եկեղեցի: Եկեղեցական զգեստ: Գթասիրտ մարդը օգնեց անանկին: Մարդկային գութը շարժվում է թշուառին անսնելիս: Բարի հողի ունի մեր հարեանը: Մեր հարեանի հոգեկան բարութիւնից մարդիկ օգուտ են քաղում: Ձգալի ծանրութիւն: Մանր զգացմունք: Օրինաւոր պաշտօն: Պաշտօնական օրէնք:

ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԹԻՒԸ.

ա. Ես կարդում եմ. Գու գրեցիր: Հնձողը հնձեց:
բ. Մենք կարդում ենք: Գուք գրեցի: Հնձողները հնձեցին:

§ 17. Առաջին տողի մէջ գործ կատարող առարկաները մէկ-մէկ են. նոցա կատարած գործողութիւնն էլ մէկ է — Ինչո՞ւ է կատարւում: Երկրորդ տողի մէջ գործողները շատ են. նոցա կատարած գործ

ծողութիւնն էլ շատ է — Տե՛ս զանի անգամ է հասարակումս։
 Գործողութիւնն էլ՝ առարկայի ու որպիս-
 սութեան պէս, կարող է մէկ և շատ ցոյց
 տալ։ Գործողութիւնը շատացնելիս՝ վերջից
 ակեղացնում ենք * և * տառերը մենակ
 կամ ուրիշ տառերի հետ։

35. Հետեւեալ օրինակները փոփոխեցէք այն-
 պէս, որ առարկաներն ու գործողութիւնները մշ-
 կից շատ ցոյց տան։ — Աշակերտը կարդում է իւր
 դասը։ (Աշակերտները կարդում են իրանց դասերը)։
 Արջն արածում է դաշտումը։ Թռչունը երգում է
 իւր քաղցրահնչիւն երգը։ Որմնագիրը պատում է
 պատը։ Վարժապետը ուսուցնում է աշակերտին։ Աշ-
 կերտը լսեց վարժապետի ասածը։ Քահանան մկր-
 տեց մանկանը։ Մանուկը մեծացաւ, ուժեղացաւ և
 իւր հօրն օգնող եղաւ։ Ամառը ես կրգնամ զիւ-
 դը, աշնանը նորից կրվերագառնամ։ Գարնանը ծա-
 ուր կըծաղկէ) ամառը պտուղը կըմեծանայ) իսկ
 աշնանը նորանց կըքաղեմ, մի մասը կ'ուտեմ և
 մի մասն էլ կըպահեմ։ Ձմեռը զիւղացու գործը
 պակասում է, բայց նա պարապ է մնում։ Գիւղա-
 ցին պարապ մնալ է սիրում։

36. Հետեւեալ օրինակների մէջ գործողու-
 թիւնները փոփոխեցէք՝ շատը մէկ շինեցէք. — Հացը
 թխում են տանտիկիները կամ հացթուխները։

(Հացը թխում է տանտիկինը և այն)։ Հացը թը-
 խում են խմորից։ Խմորը հունցում են ալիւրից,
 ջրից և խաշից։ Ալիւրն աղում են ջաղացում ցո-
 րենից։ Հացահատիկները հասնում են արտերում
 հասկերի մէջ։ Գիւղացիք դաշտը մշակում են. նոքա
 հերկում են հողը — ցեւ են անում, յետոյ ցելումը
 սերմում են ցորեն և ուրիշ հացահատիկներ։

§ 18. Մեր սովորած բառերից մի քա-
 նիսը առարկայի անուն են, միւսները որ-
 պիսութեան, իսկ ոմանք գործողութեան։
 Բառերից հարմար է խօսիլ։

37. Հետեւեալ խօսքերը վերլուծեցէք և ա-
 սացէք իւրաքանչիւր բառի նշանակութիւնը։ Փայ-
 լուն արեւ մայր մտաւ (փայլուն՝ ցոյց է տալիս
 արևի որպիսութիւնը, արեւը՝ անշունչ և նիւ-
 թական առարկայի անուն է, մայր մտաւ՝ ցոյց
 է տալիս արևի գործողութիւնը)։ Լուսինը վա-
 ղուց գնաց — թագկացաւ։ Փոքրիկ աստղերը ամպի
 տակ մտան։ Բարեպաշտ մարդիկ ժամ գնացին։ Ծոյլ
 մանուկները տանը մնացին։ Աշխատասէր աշակերտ-
 ները դասները սովորում են։ Աղօտ լուսինը լուսա-
 ւորում է քնած երկիրը։ Պայծառ աստղերը փայլում
 են պարզ երկնքի վերայ։ Սև-սև ամպերը ծածկե-
 ցին կապոյտ երկնքի երեսը։ Գիշերը մթնեց։ Վայրե-
 նի գազանները զարթեցան։ Հար մարդիկ սիրում են
 խաւար գիշերները։

38. Զոկեցէք և կարգով գրեցէք առաջ առարկայի անունը) յետոյ որպիսութեան և ապա գործողութեան. մնացած բառերը բաց թողեցէք:—

Սիրուն, անմեղ իմ գառնուկ, բուրդդ սպիտակ ու փափուկ,
Դաշտ վազելով ու արօտ) մօրդ քաշումես կարօտ:
Մի՛ լար, գառնուկ սիրական, փոքրիկ տղի դու նման,
Երգայ մայրդ՝ հետը շատ կը բերէ քեզ անուշ կաթ:

Ո՛ւռենի կանաչ, ո՛ւռենի սիրուն,
Ինչի՞ դու այսօր ուրախ չես ժպտում.
Մի՞թէ քեզ սաստիկ արևն է այրում
Ա՞րևն է այրում, ա՞նձրևը ծեծում.
Սքմատիգ մօտից սառ ջուր չէ՞ վազում:
Հայոց աշխարհից իշխաններ անցան
Ուռին կտրեցին, կեանքից զրկեցին:
Նորան տաշեցին, տաշաըշորեցին
Եւ իբանց համար թիւր շինեցին,
Նաւակ կազմեցին, մէջը նստեցան,
Մէջը նստեցան ու տուն յետ դարձան
Եւ ինձ, փոքրիկս, հեաները տարան:

Կրթութիւն: Ի՞նչ են ցոյց տալիս բառերը: (Բառերը ցոյց են տալիս առարկայ, որպիսութիւն և գործողութիւն): Ի՞նչն ենք առարկայ ասում: Ի՞նչպիսի առարկաներ գիտենք: Ո՞րոնք ենք ասում շնչաւոր առարկաներ. որոնք ենք ասում անշունչ առարկաներ: Ո՞րոնք ենք ասում նիւթական և որոնք մտաւոր: Առարկայի անունը շ ա տ ցոյց տալիս ի՞նչ փոփոխութիւն է կրում. ուրեմն ո՞րոնք են շատացնելու նշանները: Որպիսութիւն

ցոյց տուող բառերը ինչի՞ համար են գրվում, որպիսութիւնն առանց առարկայի կարող է լինել. որպիսութեան անունը շ ա տ ք ցոյց տալիս ի՞նչ տառեր է ստանում: Ինչի՞ համար են գրվում գործողութիւն ցոյց տուող բառերը: Գործողութիւնը շ ա տ ք ցոյց տալիս ի՞նչ փոփոխութիւններ է կրում: Միւսնոյն է արդեօք առարկայ և առարկան ցոյց տուող բառը, որպիսութիւն և որպիսութիւն ցոյց տուող բառը, գործողութիւն ու գործողութիւն ցոյց տուող բառը: Բառերից ի՞նչ է կազմվում:

Բ.

ԲԱՌ ԵՒ ՎԱՆԿ. ՅՆՉԻՒՆ ԵՒ ՏԱՌ.

§ 19. Առարկային, նորա որպիսութեանն ու գործողութեանը մարդս առանձին-առանձին անուններ է տալիս: Առարկայի, գործողութեան և որպիսութեան անունները բառեր են:

Բառերից կազմուած է խօսքը: — Յորենը հասել է: Հասած յորենը հնձում են մանգաղով: Հնձած ցորենը կալտում են կայերում: Յորենը կալտում են կամներով:

- ա. Հաց, ծառ, քար, ջուր, ցուրտ, սև, լաւ, մոմ, միս, չէկ, դալ, տալ:
- բ. Բաժակ, գարի, ցորեն, բարակ, հասակ, սիրուն,
- գ. Բա-րև-կամ, աշակերտ, աշխատել, աշխատութիւն, աշխատասիրութիւն:

§ 20. Առաջին տողի մէջ նշանակած բառերը կարդացվում են միանգամից. երկրորդ տողի մէջ նշանակուածները երկու անգամից, իսկ երրորդ տողի մէջ նշանակուածները—երեք և աւելի անգամից:

Բառի այն մասը, որ արտասանվում է միանգամից, լան է կոչվում:

§ 21. Վանկերի թուին նայելով բառերը լինում են՝ միավանկ, երկավանկ և բազմավանկ:

§ 22. Ամենայն բառ մի կամ միքանի վանկից է շինուած, իսկ ամենայն վանկ շինուած է մի կամ միքանի հնչիւններից:

§ 23. Գրելու ժամանակ հնչիւնների տեղակ գործ ենք ածում առանձին նշաններ, որոնք կամ գէր են կոչվում:

§ 24. Կան տառեր, որոնք հեշտ են արտասանվում և, առանց ուրիշ տառերի օգնութեան, պարզ հնչվում են. բայց կան և այնպիսի տառեր, որոնք միայնակ դըժուար են հնչվում և հեշտ հնչուող տառե-

րի օգնութեամբ են միայն արտասանվում:

Հեշտ հնչուող տառերն են՝ ա, ե, է, ի, ը, ո, օ, ու: Սոքա չայսուոր են կոչվում:

Դժուար հնչուող տառերն են՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ժ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, ն, ն, շ, չ, պ, ջ, ու, ս, վ, տ, ը, ց, է, փ, ք, ֆ: Սոքա կոչվում են բողջայն:

Բաղաձայն տառերը հեշտ հնչելու համար՝ նոցա մօտը դնում ենք շ տառը՝ բբ, գգ . . . :

§ 25. Առանց ձայնաւոր տառի վանկ չի լինիլ: Բառի մէջ քանի ձայնաւոր որ լինի, այնքան էլ վանկ կ'ունենայ նա: Առանց բաղաձայն տառի վանկ կարող է լինել:

§ 26 Գրելու ժամանակ բառի մի մասը մէկ տողից միւս տող անցկացնելիս՝ պէտք է ամբողջ վանկ կամ վանկեր անցկացնել:

Ա.-սան, ա.-րան, ա.-ժան, գի.-նի, բարի, դա.-նակ, ե.-ղան.
Ա.-րե.-գակ, ա.-բե.-ղալ, ժա.-մա.-նակ, ժա.-մա.-ցոյց:

§ 27. Կանոնաւոր կարդալու և ան-

սխալ գրելու համար պէտք է գիտենալ, թէ բառերն ինչպէս են վանկվում: Վանկելու հիմնական կանոնն այն է, որ բաղաձայն տառը, եթէ մենակ է, կաշում է իրանից լետոյ եղող ձայնաւորին:

39. Վերոյիշեալ կանոնին համաձայն վանկեցէք հետևեալ բառերը. կերայ, տեսայ, եկայ, բարակ, գաթայ, թաւայ, արեգակ, արուսեակ, քահանայ, յիսուն, Յիսուս, դարի, ցորեն, ցերեկ, ցուցակ, կարաս, կացին, գաւաթ, գինի, Գարեգին, դատաւոր, եղանակ, դատիկ, գաւակ, զօրանոր, էակից, թագաւոր, ժամանակ, լուսաւոր, Խաչատուր, ծաղիկ, հաւան, հաւատ, հասարակ, ձակաս, ձաշել, Մակար, մանուկ, Մինաս, հիւանդ, յարութիւն, նաւակ, նաւակատիր, շապիք, շամամ, Ծուլաւեր, չամիչ, չարանալ, չարասիրտ, պանիր, Պօղոս, Զաւահիր, ջուլթակ, Սահակ, սատանայ, Վահան, Վասակ, տաճար, տաղաւար, ցաւագար, փափագ, բաւոր, քաղաք, քամի, օղակ, օգուտ, օրօրոց:

Արճիճ, աղ-քաս, աղ-ջիկ, արդար, եղնիկ. Բնտեղէն, ընտրութիւն, երկրաչափ:

§ 28. Երբ բառի մէջ միքանի բաղաձայններ կան, միայն վերջին բաղաձայնն է կաշում իրանից լետոյ եղած ձայ-

նաւորին, իսկ միւսը կամ միւսները մնում են նախորդ ձայնաւորին:

40. Վանկեցէք հետևեալ բառերը՝ աղբիւր, եղջիւր, երկինք, երթիկ, երկնաւոր, երկրագործ, իշխանաւոր, ինքնասէր, որկրամոլ, որդեսէր, սրբակեաց, ընկուզ, ընտանի, ընտեղէն, թարգմանել, մարդկութիւն, մարբասէր, կարգաւոր, ընտրութիւն:

Բը-ժիշկ, բնակ, բլիթ, դոմ, դժոխք, թթու, թղուկ, բըր-դէլ, դան-դակ, զնդան, խրանիլ, ճընճ-դուկ:

§ 29. Եթէ բառի սկզբում միքանի բաղաձայն տառեր կան, վանկելու ժամանակ առաջին բաղաձայնից լետոյ դրվում է ը ձայնաւորը, իսկ վերջին բաղաձայնը կաշում է իրանից լետոյ եղող ձայնաւորին:

41. Վանկեցէք հետևեալ բառերը՝ բռնել, բըր-դել, գրիչ, գնդակ, զըլխ, գդակ, զրդել, տրամիլ, զրգուլ, զննել, զրկել, թթու, թղուկ, թռչուն, թշնամի, ժպիտ, ժլատ, ժժմակ, լուել, լրտես, խըխունջ, խնձոր, խնդիր, խրանել, ծնունդ, ծնկաչոք, ծղրիդ, կթել, կրկնել, կոթնիլ, հնդիկ, հնդկահաւ, ձնձողիկ, ձնձղուկ, մկրատ, մրջիւն, միջիկ, մրսել, ննջարան, նստարան, նրբասէր, նկուզ, նկար, չղջիկ, պղպեղ, պղտոր, ջնջան, վրձին, վրդովիլ, տրամոյ, տրտունջ, փքուն, ցնծութիւն, փրփուր, փրկիչ, քրքում, քրքիլ:

§ 30. Բառի վերջում բաղաձայն տառերը միշտ կցվում են իրանցից առաջ եղող ձայնաւորին՝ մէկ լինին, թէ մի. քանի. միայն և և յ տառերը հարեւան բաղաձայնի հետ առանձին վանկ են կազմում (ծունկ. ծունր):

42. Վանկեցէ՛ք հետեւեալ բառերը և ուր որ պէտք է՝ ը աւելացրէք:— Սանդ (գործիք), սանր, ծունկ, ծունր, ծածկ, ծանր, մարդ, մանր, կուրծ, կարծր, բարձր, ոտք, ոտն, ձեռք, ձեռն, բերք, բեռն, կառք, դառն, դառն, սառն, դուռն, նուռն, փուռն, ծուռն, ամառն, ձմեռն, մեղր, կայր, եզր, ծաղր:

Բրժիչկ, զրդում, զրնդան, թըղուկ, ժըժմակ, ւըրտես, խընդիր, ծընունդ:

Սկունդ—ըսկունդ. սպաս—ըսպաս. զբաղմունք—ըբաղմունք. շտապ—ըշտապ:

Առաջին սողի մէջ բաղաձայն տառը վանկուելու համար իրանից չետոյ առել է ը ձայնաւորը. իսկ երկրորդ սողի մէջ բաղաձայնը իրանից առաջ է առել այդ ձայնաւորը:

(§ 41. * բաղաձայնը Բ, Հ, Դ, Կ, Ֆ, Գ տառերի հետ, ղ բաղաձայնը Բ, Գ, Ծ տառերի հետ և շ բաղաձայնը Կ տառի հետ հանդիպելիս, բառի սկզբում, հնչվում են որպէս ամփոփ ը** ըԳ ըԸ և կազմում են կէս վանկ, թէև վանկելու ժամանակ

իրանց յաջորդ վանկին կցուելով, մի վանկ են համարվում:

43. Աւելացրէ՛ք ը տառը ուր որ հարկաւոր էք համարում: Աթափուիլ, սկեսուր, սկայ, սկունդ, սկուտոդ, սպաս, սպունգ, սպի, սպիտակ, սպեղանի, սպասել, ստամոքս, ստէպ, ստոր, ստոյգ, ստանալ, ստինք, սփիւռ, սփոփանք, սփածանելի, սքողել, սքանչելի, սքանչանալ:— Զբօսանք, զբաղմունք, ըզգալի, զգեստ, զգոյշ, զգօն, զգայարանք. զմայլել, զչարել, շտապիլ, շտեմարան:

Սարդ (միջատ)—սարդ (այդ սարը):

Ձին երկու տառի վերայ ծառ* եղաւ (ծառանալ):

Ծառ* արմատից կտրուեցաւ (այս ծառը):

Սարդն—սարդըն. տունն. բունն. (այն տունը):

§ 32. *, Կ, և տառերը, եթէ բառի անանջատ մասը չեն, այլ՝ որպէս եկամուտ տառեր, աւելացած են բառի վերջում, որ առարկաների դասաւորութիւնը ցոյց տան, իրանց նախորդ բաղաձայնի հետ միշտ մի վանկ են կազմում:

44. Ուր որ յարմար է՝ ը զրէ՛ք և վանկ կազմեցէ՛ք:— Կարդ--կարդալ: Կարդ կարիր: Բարդ—բարդել. մարդ—տղամարդ. մէրդ—մարդ—մայրդ. հօրթ—հօրդ. խորթ—խորդ. կիրթ—գիրդ. սերտ—սերդ. բանդ—բանդարկել. բանդ շինիր, յետոյ խաղա՛. մարս

— մարտել. մերս — մերսել. մէրս — մարս — մայրս. սարս
— սարսել — սարսափ. սարս ձիւնապատ, անպերս մը-
թին, անտառներս խիտ:

§ 33. ւ և չ տառերը գրվում են բա-
ռի սկզբում և, եթէ մօտի տառը բաղա-
ձայն է, այն ժամանակ: առնում է ը ձայնա-
ւորը, իսկ չ առնում է (') նշանը և առանձին
վանկ են կազմում. իսկ եթէ մօտի տառը ձայ-
նաւոր է, այն ժամանակ երկուսն էլ առ-
նում են (') նշանը և չաջորդ ձայնաւորի
հետ մի վանկ են կազմում (չգիտեմ,
չ'ունիմ). կըգրեմ, կ'ասեմ:

45. Վերոյիշեալ կանոնների համեմատ հե-
տեւեալ ոտանաւորի բառերը վանկերի բաժանած
գրեցէք ձեր տետրակների վերայ:

Մէկ փոքրիկ գառը՝ ձիւնի նման մաքուր սպիտակ,
Մի օր գնաց իւր մօր հետ դաշտը, որ արածի,
Եւ իւր կամքին սկսեց թռչիլ քարերի տակը,
Չ'էր ուզում որ փոքր միջոց հանգիստ նստի:
Դարիվեր, դարիվար վազվրզում էր անխոհեմը.
Թէ քար, թէ փայտ, թէ խոտ, թէ ձոր, բնաւ չէր
նայում:

Ո'րդեակ, հանդարտ, ձայն էր տալիս նորա մայրը.
Չգո'չ կացի'ր, որդեակ, լսիր իմ խրատը:
Բայց գառնուկը հէնց խաղում էր ու թռչտում

Եւ դարիվեր ու դարիվար միշտ վազվրզում:
Վերջն՝ երբ գառը իւր մօր խօսքին ահանջ չ'արաւ,
Սարի գլխին իւր գծութեան պատիժն առաւ.
Մի մեծ քար կար այնտեղ ընկած, որի վրայով
Մեր գառնուկը խաղէր անում թռչկոտալով.
Մէկ էլ անսնես ոտի մէկը տակօնն եղաւ,
Քսան տեղից կտոր-կտոր փշրուեցաւ:

§ 34. Հայերէն տառերը գրվում և
կարդացվում են հետեւեալ կարգով՝ ալբ,
բեն, գիմ, դա, եչ, դա, է, ըթ, թոյ, ժէ,
ինի, լիւն, խէ, ծա, կէն, հոյ, ձա, դադ,
ձէ, մէն, փ, նու, շա, ս, չա, սէ, ջէ, ռա,
սէ, վէվ, տիւն, ըէ, ցոյ, վիւն, փիւր, քէ,
օ, ֆէ¹⁾:

§ 35. Բոլոր տառերը միասին վեր-
ցրած՝ կազմում են Հայերէն այբ-բէնը, իսկ
այստեղ յառաջ բերած կարգը կոչվում է
այբբէնաձև կարգ: Հայերէն այբուբենի տա-
ռերը 38 են:

1) օ և ֆ տառերը վերջին ժամանակներն են մտած
Հայերէն այբուբենի մէջ. օ-ի փոխանակ առաջ գործ էր
ածվում ու, իսկ ֆ այժմ էլ շատ քիչ գործածութիւն ու-
նի մեզանում. ֆ-ով գրվում են միմիայն օտարազգի բա-
ռերը:

յ ՏԱՌԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

յարկ, հարկ, լամառ, համար. եղբայր—եղբայր, քուր—քուր. արի—արի, ալծ—ալծ: Քահանայ—քահանայ, երեկոյ—երեկո, լետոյ—լետո, դաթայ—դաթա:

§ 36. Հայերէն այբուբենի մէջ , տառը երեք տեսակ գործածութիւն ունի՝ ա. կարգացվում է որպէս բաղաձայն տառ. բ. հնչվում է որպէս կիսաձայն ի և գ. բոլորովին համր է մնում:

Յառաջ—առաջ, լետոյ—ետոյ, լիսուն—լիսուն, Յիսուս—իսուս:

§ 37. Բառի սկզբում , կարդացվում է որպէս փափուկ 4: Յ-ով սկսուող բառերից մի քանիսը առանց , տառի էլ պահպանում են իրանց նշանակութիւնը, շատ թէ քիչ հասկանալի են լինում:

46. Հետևեալ խօսքերի մէջ գտէք յ-ով սկսուած բառերը և տակը գիծ քաշեցէք:—Յիսուսը յամառ և յանդուգն մանուկներին չէ սիրում: Յակորը յանդիմանեց մի յիմար տղայի: Յուսիկը յարձակուեցաւ Յովսէփի վերայ և յափշտակեց նորա ձեռքի յասիկը և յամբարը: Յուգան սպանեց մի յովազ և մի յամոյր—վայրի այծ: Յաբէթը յամր

քայլերով յածում էր գետի եզերքին: Կատուն յառած աչքերով նայում էր յատակին և ուզում էր նորա տակը բուն դրած մուկը յաջողութեամբ բռնել: Յարուսթիւնը յարատե աշխատում է և ամէնքը յարգում են նորան: Ես տեսել եմ յակինթ և յախճապակ: Յանկարծ յարդի տակից դուրս սողաց օձը. զիւղացին ան-յապող սպանեց նորան: Ուսուցիչը յայանեց յանցաւոր մանուկներին, որ ինքը յատուկ կրնեղանայ նորանցից, եթէ իրանց ծուլութեանը չեն յաղթիլ և յաջողութեամբ չեն պատրաստիլ յաջորդ օրերի դասերը: Խմ գիրքն ունի յաւելուած և յառաջաբան: Ձեր յարկի տակ յարդարեցէք ձեզ համար յարմարաւ որ բնակարան: Յաճախ Յովհաննէսը չէր կարողանում յագենալ իրանց պարտիզի յաւերժական գեղեցկութեամբ: Յուսիկը յանձնեց Յովսէփին և Յովակիմին իւր քրոջ յուլունքները, որոնք գեղեցիկ կերպով շարա-յարած էին: Մենք յաւիտեան չենք կարող ազատուիլ մեր ծնողաց երախտիքից:

47. յ-ով սկսուած բառերի տակը գիծ քաշեցէք:—Մերունին յենած իւր ձեռնափայտին, յետ էր նայում դէպի գետը, որի յասակ ջուրը յեղ յեղալով հոսում էր նորա մօտից. ծերունին յիշում էր իւր մանկութիւնը և յորդորում էր իւր թոռներին, որ յուր կեանք չ'վարեն և յիմար մանուկների պէս իրանց յոյսը ուրիշների վերայ չ'դնեն: Մանուկները միշտ յօժարութեամբ ախանջ էին դր-

նում և յիրաւի կատարում էլ էին նորա խօսքերը: Յունիս և յուլիս ամիսներին մարդիկ շոգի սաստկութիւնից շուտ են յոգնում: Յոպոպը յունապի ծառի վերայ յուշարարի պէս շարունակ կանչում էր: Յոյնը յղիեց պողպատէ թիթեղը և յղեց իւր ընկերին: Մոյլերը թէ դասից առաջ և թէ դասից յետոյ շարունակ յօրանջում էին: Յինանց ուտիսը յիսուն օր է տեւում: Հայրս մի միտք յղացաւ և շինեց մի զեղեցիկ յոպնակ — սայլակ: Յովար մի ճնչին նշանախեց է: Աւիւծը յօշոտեց մի ոչխար: Յիշոց տալը անվայել և պախարակելի բան է: Յոգնակի թիւ: Յոքելեան տարի: Մտքի յեղափոխութիւն: Ջուրը յուզել: Մասների յօդերը համարել:— Ոչ որ չի ասիլ, թէ աչքիդ վերև յօնք կայ:

Էլ չ'խօսեց Արաքսը, յորձանք տուեց ահագին, Օղակ-օղակ օձի պէս յառաջ սողաց մոլեգին:

48. Վերևի երկու վարժութիւնների մէջ հանդիպած բոլոր յով սկսուող բառերը ջոկեցէք այբբենական կարգով և ձեզ համար աղիւսակ կազմեցէք: Աշխարհաբար լեզուի մէջ այդ բառերից զատ յով սկսուող ուրիշ բառեր հագիւ թէ պատահին:

§ 38. Բառի մէջ , տառը կցուելով և « ձայնաւորներին՝ կարդացվում է որպէս կիսաձայն և և այդ ձայնաւորների հետ մի հնչիւն է կազմում, որ կոչվում է երկբարբառ:

Երկբարբառը տողադարձի ժամանակ մի տառ է համարվում և չի բաժանվում:

48. Հետևեալ բառերը վանկերի բաժանեցէք և գտէք նորանց մէջ յով կազմուած երկբարբառը: Հայր, հայրենի, Հայաստան, այս, այսօր, այժմ, այժ, այգ, այգի, այրի, այդ, այլակերպ, բայց, գայլ, դայլայլիկ, Զայրմայր, զայրանալ, ժայռանալ, եղբայր, հայրենասէր: Գոյութիւն, գոյական, ակոյեան, հոյակապ, նոյաչէն, շոյել: Լոյս, յոյս, յոյն, բոյս, բոյն, կոյս, գոյն, թոյն, ոյժ, գոյժ, աշխոյժ, ժամացոյց, համբոյր, Պարոյր, հօրաքոյր, թակոյի, մակոյի, երեկոյթ, հացկերոյթ:

§ 39. Բառերի վերջերում « և » ձայնաւորները երբէք միայնակ չեն մնում (§ 42), այլ միշտ իրանցից լետոյ , են աւուում:

§ 40. Միավանկ բառերի վերջը , տառը կարդացվում է որպէս կէս և , իսկ բազմավանկների վերջը համր է մնում — չի կարդացվում (§ 36):

50. Հետևեալ խօսքերից ջոկեցէք , ունեցող միավանկ և բազմավանկ բառերը.

Ես տեսայ մէկ հայ: Յովհաննէսը թէյ էր խը-

մում: Թէյին ասում ենք չայ: Նոյր ունէր երեք որդի: Ճայ Թուչունը ճահճային տեղեր է սիրում: Այնպէս անենք, որ վերջը զլխներին վայ չ'տանք: Պայ-պայ'), կանչեց Ռուբէնը. էդ Ի՞նչպէս ես փայ անում (բաժանում) հացը: Գործողութիւն—բայ: — Հայրս գնեց կաթսայ: Մայրս գաթայ Թխեց: Ես տեսայ մէկ քահանայ: Այս երեկոյ ես կրգնամ եկեղեցի. յետոյ տուն կրգամ և գործերս կր վերջացնեմ: Ամառուայ տաք օրերին մի տղայ նստած էր ծառի տակը. ես տեսայ նորան, մօտեցայ, կողքին նստեցայ:

Էսօրուայ գործի վաղուան մի՛ զցիր: Էսօրուայ փուշը էգուցուայ նուշը:

§ 41. Գործողութիւն ցոյց տուող միավանկ բառերի վերջը , տառը համր է մնում:

51. Վարժապետը կրգայ ուսումնարան և մեզ դաս կրտայ: Պայուսակիս մէջ կայ զիրք և տեսրակներ: Ռուբէնը կր մնայ մօտս: Երեխան որ լայ, մայրը ծիծ կրտայ:

1) Պալ—երկիւղից չառաջացած բացականչութիւն: Պալ նշանակում է գերբնական արարած—ինս ու ջինս և հէնց դորանից էլ պիտի առաջացած լինի պոյ ճանարկութիւնը, որ ժողովրդի բերանում գործ է ածում, թէ և գրականութեան մէջ մուտք չէ գտած մինչև այսօր:

§ 42. Յատուկ անունների վերջում, գործողութիւնը հրամայական ձևով գրուելիս և «ա, գա, նա, ահա, քո, այո՛ բառերի վերջում , տառը չի դրվում, այլ վերանում է¹⁾:

52. Գնա՛ և ասա՛ ընկերիս, որ ինձ մօտ գայ: Գու կարգա՛ դասդ, իսկ նա կը լսէ. յետոյ նա կը կարդայ, դու կը լսես: Մնա՛ այստեղ: Այո՛, ես կը մնամ: Սա ու դա միասին գնացին ուսումնարան: Ահա՛ նա էլ եկաւ: Քահանան եկեղեցում ասում է. «Եյո՛, Տէր՛ զժողովուրդս քո և օրհնեա՛ զժառանգութիւնս քո»: — Խոնարհեցո՛, ապրեցո՛:

Քո եղբօր անունը եղիս է: Նորա քրոջ անունը Աննա է: Իմ անունը Արա է: Քրոջս անունը Ով-

1) Ծանօթ. Ասում ենք վերանում է և ոչ թէ չի կարող գրուել: Մենք շատ պատճառներ ունինք կարծելու, որ այն մարդիկ, որոնք շատուկ անունների վերջում , են գնում, չեն սխալվում: Ուշադրութիւն դարձրէք մեր դրաբար մատենագրութեանը. արդեօք ամենաջն տեղ նորա շատուկ անունները առանց , տառի են գործածում: Ոչ: Ուշադրութիւն դարձրէք նաև , չ'ունեցող շատուկ անունների սեռականին աշխարհաբարի մէջ. նա ստանում է , տառը, որ ուղղականի մէջ միմիայն վերացած էր (Աննա—Աննալ—Աննակի):

սաննա է: Մօրս անունը Սոն ս է: Ֆրանսիա) Իտալիա, Գերմանիա, Անգլիա և Ռուսիա՝ աշխարհների անուաններ են:

53. Գրեցէ՛ք ձեզանից յ տառ ունեցող բառեր՝ սովորած կանոններին համաձայն: Ամէն մի կանոնի վերայ հինգ բառ գրեցէ՛ք, միայն այն կարգով, ինչ կարգով որ դասաւորուած են այստեղ կանոնները:

Վ Լ - ՏԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

§ 43. Հայերէն այբուբենի մէջ Վ հընչիւնը երկու նշանագիր ունի Վ Լ - - գործէ ասովում միշտ ձայնաւորից լետոյ, իսկ Վ ձայնաւորից առաջ, միայն ու-ից առաջ Վ չի գրվում և ոչ ու-ից լետոյ - (ինչի՞ն¹⁾),

Բարդութիւնների մէջ ձայնաւորից լետոյ Վ կարող է գրուիլ:

1) Արտհետև ու տառը իրան մէջ ունի Վ հնչիւնը (որդի—փօրդի, ոսկի—փօսկի). բառի վերջումն էլ ու-ից լետոյ եթէ - դրուէր, ու տառը կը կորցնէր իւր բուն հնչիւնը և ու կը դառնար (հոգով—հոգու. բարով—բարու. սիրով—սիրու):

54. Վ հնչիւնը բառի սկզբում և վերջում: Վարդ, հաւ, վար, ցաւ, վաղ, կաւ, վեղար, վերել, համբաւ, վարսակ, Վասակ, Վաղարշ, Վարդան, բարի, արեւ, անձրեւ, տերեւ: Վահան, վանք, վազ, վուշ, կռիւ, անիւ, ազնիւ, թիւ, եկաւ, տեսաւ, կերաւ, տարաւ, բերաւ:

55. Վ հնչիւնը ու-ից առաջ և յետոյ: — Ոսկի, որդի, ոչինչ, Ոսկան, ոզի, ոլոզ, ոլոր, ոլորակ, ողբ, ողն, ողկոյզ, ողնաշար, ողորկ, ողողել, ողորմելի որջ, ողջունել, ոձ, ոչխար, ոսպ, ոսկր, ոստի, ոտ, ոտայն, ոտան, ոտոտակ, ոտ, ոտանաւոր, որբանալ, որդ, որդի, որից, որկոր, որկրամոլ, որձ, որձաքար, որմ, որոգայթ, որոճալ, որոնել, որոշել:

Վով, սով, հով, ծով, բով, կողով, բարով, կորով, ժողով, խորոված, սովորել: Հայրս ձիով բաղաք զնաց և շուտով վերադարձաւ: Ծովի վերայ նաւով են ձանապարհ զնում, իսկ ցամաքի վերայ սայլով, կառքով, ձիով, էշով, ջորիով, երկաթուղիով: — Բարով գնաս, բարով գաս, չարի բերնին բարով տաս: — Տեսնելով, ասելով, անելով, զնալով, գալով, տալով, մնալով:

56. Վերջին եօթը տողի մէջ Վ-ով վերջացած բառերի Վ տառը փոխեցէ՛ք - տառի և կարդացէ՛ք:

57. - Հնչիւնը բառի մէջ: Աւագ, աւագ, աւագան, աւելի, աւետիս, աւետարան, Անուշաւան, բաւական, բաւարար, բեռ, գաւազան, գաւաթ,

զաւառ, դաւանել, դաւակիրց, Դաւիթ, Եւա, Եւ-
րոպա, զաւակ, Թաւայ, Թաղաւոր, Ժապաւէն, լա-
ւանալ, խաւար, խաւեար, ծարաւիլ, ծաւալել,
հաւատ, հաւան, հեւալ, հիւանդ, հեռաւոր, ձա-
ւար, Ղեւոնդ, Ճիւղաղ, նաւակ, Շաւարշ, սաւան,
Սեան, տաւար, տաւիղ, ցաւագար, առաւօտ, քա-
ւող, փարաւոն:

58. Հետեւեալ բառերից ամէն մինը երկու
մաս բաժանեցէք, միայն այնպէս, որ ամեն մի մաս
սը առանձնապէս մի նշանակութիւն ունենայ:
— Նաւավար (նաւ և վարել) զօրավար, կառավար,
վարդապառ, բոցավառ, մրգավաճառ, հացավաճառ,
Խոջիվանք, օրավար, համնավաստակ, բազմավտանգ,
երկարավիզ, օթեվան, հոգեվարք:

« և ի» ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

§ 44. « տառը դրուելով « և ի տա-
ռերի լետեր՝ ոչնչացնում է նոցա ձայնը
և նոցա հետ մի առանձին նոր հնչիւն է
կազմում, որ երկու տառից շինուած լի-
նելուն համար՝ երկբարբառ է կոչվում. «
և ի» երկբարբառները տողադարձի ժա-
մանակ անբաժան են մնում:

§ 45. « երկբարբառը պարզ հնչիւն

ունի, միայն երբ որ իրանից լետոյ որև-
իցէ ձայնաւոր է ունենում՝ մեղմ չի ձայն
է հանում. իսկ երբ երկու « միւսնոյն
բառի մէջ հանդիպում են իրար, առաջին
«-ի « տառը ներդաշնակութեան համար
դուրս է ձգվում, կամ «-ին փոխարի-
նում է չ հնչիւնը: ¹⁾

59. Հետեւեալ բառերի և խօսքերի մէջ գտէ՛ք
Թէ ո՛րտեղ է « տառը պահում իւր պարզ հըն-
չիւնը, ո՛րտեղ է նա մեղմ չ հնչվում; և ո՛ր բա-
ռերի մէջ կարելի է նորան կրճատել:

Տուն, բուն, անուն, գարուն, աշուն, կան-
գուն, շուն, նուշ, անուշ, կատու, բու, Թութակ,
յունաբ, աղուն, ուղտ, ուս, ուրագ, ուտել, ունե-
նայ: Ես ունիմ ուրագ: Սողունները զեռում էին
խոտերի մէջ: Նա կարդում է դասը ուղիղ և ան-
սխալ: Ռուբէնը զնում է խաղալու: Ես պատրաս-
տում եմ դասս:

¹⁾ Երկու « իրար հանդիպելիս՝ ոմանք մէկ «-ն
ամբողջապէս փոխում են չ տառի, հիմնուելով այն կանո-
նի վերայ, թէ ձայնաւորից առաջ կամ բաղաձայնից լե-
տոյ անմիջապէս « չպէտք է գործածուի: Ուրիշները նը-
կատում են, որ այդտեղ (կորուսման կանոնին համաձայն)
« տառը զեղչվում է, իսկ նորա միւս բաղադրիչ մասը
— « պահում է իւր դիրքը: Երկու կողմն էլ բազմաթիւ
հետեողներ ունի:

Հայրս ինձ մի գիրք նուիրեց: Վարժապետը պատուիրեց, որ մեր տետրակները մաքուր պահենք: Գայլը հովուի ոչխարներից մինը յափշտակեց: Չը մեռը գետը ծածկուեւէր սառուցոյվ:

Ասում են՝ որ դաս չխմանայր անպատուութիւն է: Ես ազնուութեամբ կրկատարեմ իմ պարտքս: Երկու մանուկ այսօր փողոցում ծեծուում էին: Թշնամիքը իրար հետ կռուում են: Քոյր ու եղբայր համբուրուում էին իրանց մօր հետ: Ստախօս մարդուն արժանապատուութիւնից հեռու պէտք է համարենք: Ես լուացուում է, մաքրուում է, սանդրուում է և յետոյ ուղևորուում է դէպի ուսումնարան

§ 46. Ե- երկբարբառ է, երբ իրանից լետոյ մի որևիցէ արմատական բաղաձայն ունի՝ իւ-ը. իւ-ր. հիւ-ն:

Ե- պարզ վանկ է և կարգացվում է որպէս ի՛, եթէ իրանից լետոյ արմատական բաղաձայն չ'ունի՝ Ե-ի, անի- — Ե-ի. անի՛:

60. Հետևեալ բառերի և խօսքերի մէջ դրտէք թէ ո՛րտե՞ղ է Ե- երկբարբառ և ո՛րտե՞ղ սոսկ վանկ. բոլոր օրինակները երկու կարգ բաժանեցէք:

Թիւ—թիւն, ազնիւ, ազնուութիւն, անիւ, ձիւն, կռիւ, նիւթ, պատիւ, իւղ, միւս, հիւանդ,

հիւսն, դիւան, զիւղ, գիւտ, բիւր, հիւր, ձիւթ, հիւթ, դիւահար, սուգ ու շիւան, ճիւղ, իւր, կիւրակէ, կիւրեղ, հիւսիս, սիւնակ, դիւրին: Անիւ, անիւներ: Սայլը անիւներով է պտըտում: Ազնիւները անազնիւներից միշտ հեռու պէտք է մնան: Աղբիւրի ջուրը շատ առողջարար է: Տունը շինում են աղիւսից: Մարդու արիւնը տաք է և կարմիր:

* Լ օ ՏԱՌԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

§ 47. Հայերէն լեզուի մէջ * Լ օ տառերը շատ անգամ միմեանց նման են հընչվում, բայց նոքա տարբեր ուղղագրութիւն ունին:

ա. Բառի սկզբում * Լ օ պահում են իրանց կանոնաւոր հնչիւնը (օր, որ, օղ, որն):

բ. Ղ բաղաձայնից առաջ միայն * կորցնում է իւր ձայնը և կարգացվում է օ՝ (ով):

գ. Բառի վերջում օ չէ գործածվում, այլ միշտ ու կամ ո (լետոյ, կեցո՛):

դ. Բառի մէջը * Լ օ տառերը միա-

պէս օ են կարդացվում (մօր, մոր,
հօր, հոր):

61. Հեռեկեալ բառերը երեք խումբի բաժանեցէք՝ ա և օ տառերի ուղղագրութեանը նայելով. օր, որ, օրթի, որդի, օղ, ողն, օդ, որդ, որթ, օրօրոց, օգնական, օժանդակել, ողբալ, որսալ, ոտտոտել, օծել, օթեանել, օձ, օշարակ, օտար, օրիորդ, ոսկի, ոսպ, օրինակ, օրէնք, օրհնութիւն, օձիք, օղի, օճառ, օշինդր:

Ով ովկիանոս, ովազիս, ովսաննա, ովքր:

Յետոյ, երեկոյ, յարգոյ, ապրեցո՛, կեցո՛, խոնարհեցո՛, գշխոյ, Յարոյ, Կարոյ, արտաքոյ, ներքոյ:

62. Հեռեկեալ խօսքերից՝ մէջը օ ունեցող բառերը ջոկեցէ՛ք և ամեները գիծ բաշեցէք: — Գիւղացին արօրով վարում էր ցելը և խոր-խոր ախօսներ էր ձգում: Առաւօտը անօթուց ես գնացի արտօրայքը գբօսնելու: Անօրէն պարսիկը՝ ամօթը կորցրած, խլեց մեր կովը՝ արօտից բերած. մայրս աչքերից արտօր թափելով, տան անօթները վաճառեց շուտով, զօշաքաղ պարսիկ պարտքը վճարեց, կովը յետ բերեց: Այսօր՝ աղօթելուց յետոյ, գնացինք բացօթեայ տեղ: Ճանապարհի մօտ մի արօսի ծառ կար. ծառի վերայ արօս թռչունը բուն էր շինել: Լուսնիակի աղօտ լոյսը երդկիցը ներս թափանցեց: Աղօրիքով մայրս աղ էր աղում, երբ որ բօթաբերը համբաւ բերեց նորան իւր սպանուած որդու մասին:

63. Քրիստոսի մօտ բերին մի հիւանդ, որի ձեռը գօսացած էր: Մեր ուսումնարանում գիշերօթիկ աշակերտներ էլ կան: Աղասին գօտին կապեց, թուրը կախեց, դուրս վազեց: Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ, որ իմ ձեռքով գործեցի: Եօթը գոն ճանապարհորդներ՝ թեղօշի թօշնած տերևների հօվանին արհամարհելով, թօթափեցին իրանցից յօգնածութիւնը, թողը, տօթը և իրանց զօրեղ ոտներին ուժ տալով՝ առաջ գնացին: Խմ եղբօր որդին դարբին է. նա կրակի մէջ զօղում է երկաթը: Գորտի մի տեսակին ասում են դօրօշ, իսկ մողէսի մի տեսակին՝ քարադօրօշ: Քահանայք այսօր թափօր արին: Մանուկը թօթովելով աչքերը՝ կարգում էր մօր նամակը: Կարապետը աննշան թօշակ է ստանում: Նոքա լէգէօնի պէս առաջս դուրս եկան: Հացթուխը լօշ էր թխում: Պարտիզի պատերից կախուած են լօշտակի կակուղ ցօղունները: Գիւղացիք լօռից աւել են կապում: Աերարիուի մի տեսակին ասում են լօղիկ: Խօլամիտ մարդուն խօսք չես հասկացնիլ: Մանօթիս ծնօտը խօթացել է: Մանուկը ծօղակով թռչուն բռնեց թօնուտ խօտերի մէջ:

64. Պօղոսը համառօտ նամակով իւր կարօտը յայտնեց եղբօրը: Աղքատը ոտին կօշիկ չ'ունէր: Կրօնի ուսուցիչը հօրաբրոջս կարձառօտ պատմեց դասի բովանդակութիւնը: Առիւծը որջի մէջ կօշում էր. յետոյ նա իւր հօր ձայնով մանչաց և

Հօտն ու Հօրանը, և զն ու Հօտաղը սարսափի մէջ
 ընկան: Քամին ղողանջում էր. մանկիկի ձօձը և ժա-
 մացոյցի ձօձանակը շարժվում էին: Վատերը ձօ-
 շում են լաւերին: Մի մրայօն աղջիկ իւր անդրա-
 նիկ ձեռագործը մօրաքրոջը ձօնեց: Տղան անձրեւաջրի
 առաջը մօր կապեց: Գայլը յօշոտեց մի գառը: Պօ-
 դոսը յօժարութեամբ մի յօդուած գրեց: Կապիկի
 մատների յօդերը երկար են: Երկարամօրուք այժը
 հպարտ-հպարտ ման էր գալիս: Այգեպանը յօնքե-
 րը կիտած յօտում էր որթան փափուկ ստերը—մա-
 տըն էր կտրում: Մի բան յօրինելիս՝ արթուն եղիւր,
 մի՛ յօրանջիր: Նախատօնակից յետոյ երեխային
 մկրտեցին. բահանան նսրօտը կապեց, անուռը նօ-
 տըր տառերով գրեց սօմարի մէջ և իւր պաշտօնը
 վերջացրեց: Եկեղեցում կան ոսկեզօծ պատկերներ,
 իսկ նոցա երեաներին փռած են ոսկեզօղ ծած-
 կոցներ:

65. Պօդոսը բարեգօտը հագաւ և Սօսի հեռ
 գնաց լեռները քօշ որսալու: Սօսի ծառի սօսափիւ-
 նըն ու սօսիւնը սաստիկ դուր են գալիս ինձ: Տօ-
 սախի (շիմշերի) փայտից ամաններ են շինում:
 Գիւղացի հարօր՝ քօղը երեսին, քօշերը հագին, ցօ-
 ղաթաթախ մարգերից կանաչի էր քաղում: Նօ-
 տարները տօն օրերին իրանց գրասենեակները չեն
 բաց անում: Շօշափելով կարելի է իմանալ առար-
 կայի նօսրն ու թանձրը: Շօթի հաց: Պրօնից (ղոյ-
 թուկ) շինում են բարձեր: Գօշ Միսիթարը լաւ-լաւ

առակներ ունի գրած: Նաւթին նօթ էլ են ա-
 սում: Նօթ են ասում նմանապէս մի սեւակ պա-
 սուական կարմիր ներկի:

66. Այն մարդին շատ առօք-փառօք ընդունե-
 ցին: Խելօք երեխան իրօք պատիւ է վայելում:
 Կարծեօք ամենքը գնացին: Արդեօք ուսումնարա-
 նից էք գալիս: Մարդկօրէն գործած սխալներդ Աս-
 տուած կըներէ: — Կարգալ—կարգացող—կարգացող:
 Ծնել—ծնող—ծնող: Գրել—գրող—գրող: Գործել—
 գործօն: Կարել—կտրօն: Թերթել—թերթօն: Կո-
 չել—կոչօնք:

67. Վերոյիշեալ վեց վարժութիւններից (61,
 62, 63, 64, 65, 66) այբբենական կարգով ջօկեցէք
 բոլոր օ ունեցող բառերը և ձեզ համար մի աղիւ-
 սակ կազմեցէք: Աշխարհաբար լեզուի մէջ այդ բա-
 ռերից զատ՝ օ-ով գրուող բառեր հագիւ թէ պա-
 տահին: Մնացած բոլոր բառերը ո-ով են գրվում:

է եի է ՏԱՌԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

§ 48. Հայերէն այբուբենի մէջ կան
 էլի երկու տառ, որոնք բառերի մէջ հա-
 մարեա՛ միանման հնչիւն ունին, թէև դո-
 ցա ուղղագրութիւնը տարբեր է իրարից:
 Դոքա են է և է:

ա. Բառի սկզբում է և է տառերը պահպանում են իրանց լատուկ հնչիւնը:

բ. Բառերի վերջերում է տառը երբէք չի գործածվում:

գ. Բառերի մէջը է և է միատեսակ են հնչվում:

68. ա. բ. Հետեւեալ բառերը երկու խումբի բաժանեցէք՝ սկզբում է ունեցողներ և սկզբում կամ վերջում է ունեցողներ.

Ես, էս, եղ, եղենի, էգ, էակ, երգ, եղեմ, եզ, եզնակ, էշ, էրէ, էութիւն, եզը, էլներ, եկաւ, էկաւ, եղաւ, էլաւ, եկեղեցի, եղան, եղաման, էծ, էջ, էր, էհ, էլ, եղբայր, եղեամ, եղեգն: Հայրս եղենի կրկորէ: Քոյրդ եղինջ կըբաղէ: Եղջերուն խոտ կ'ուտէ: Գայիանէն վերջրեց մի և ոտտանի: Վարվառէն եպիսկոպոսի ձեռքը համբուրեց: Հոփսի սիմէն եռանդոտ աղջիկ է: Մամբրէն երեք երկար երգ երգեց: Մարգարէի հրամանով երկրի երեսը մանանայով ծածկուեցաւ: Եօթը հոգի կերան մեր եփած կերակրից: Երկինքը ծածկուել է ամպերով:

§ 49. Բառի մէջը է գործ է անվում՝

ա. Մի քանի որոշ վերջաւորութիւն ունեցող բառերում:

բ. Այն բառերում՝ որոնք փոփոխուելիս, է հնչիւնը կամ փոխում են կամ կորցնում:

գ. Մի քանի բառերի մէջ, որոնցում է հնչիւնի փոփոխութիւնը կամ գործածութիւնից ընկել է կամ դեռ ևս դժուար է ձեզ հասկանալ:

69. Հետեւեալ բառերի մէջ վերջաւորութիւնների տակը գիծ քաշեցէ՛ք և այդպիսի վերջաւորութիւն ունեցող բառերում միշտ է տառը գործածեցէք:

- ✓ ա. Գինեւէտ, հոտաւէտ, ծաղկաւէտ, մրդաւէտ....
- ✓ բ. Քաջապէս, արիապէս, մեծապէս, դրականապէս, ինձ պէս, քեզ պէս....
- ✓ գ. Հացեղէն, քարեղէն, հողեղէն, մտեղէն, կանաչեղէն . . .
- ✓ դ. Մարդիօրէն, քաջօրէն, ինքնօրէն, կատաղօրէն....
- ✓ ե. Հպերէն, տաճկերէն, ուուերէն, պարսկերէն, Փրանսերէն....
- զ. Թագընկէց, գահընկէց, պատուընկէց, շանթընկէց....
- է. Զրօրհէք, գնացէք, եկէք, տարէք, կըտանէք, կըխօսէք....
- ը. Կըգրէր, կըբերէր, կըտանէր, կ'ուտէր, կըխմէր, կըհազնէր....
- թ. Յովհաննէս, Վրթանէս, Արիստակէս....
- ժ. Նաթանալէլ, Իսրայէլ, Էմանուէլ, Աբէլ....
- ժա. Կապէն, Ռուբէն, Բաբէլէն, Սուրէն....

66. Վերոյիշեալ տասնումէկ վերջաւորութիւնների վերայ օրինակներ գրեցէք ձեզանից՝ ամէն մի

վերջաւորութեան վերայ երկու կամ երեք օրինակ: Գողթսն դաւառը զիննէս երկիր է: -- Գաշաու՛մ հոտաւէս ծաղիկներ շատ կան, և այլն:

67. Փոփոխեցէք հետեւեալ բառերն այնպէս՝ որ ք հնչիւնի տեղը ք գրուի:

Ապաւէն — ասպաւինել: Անէծք — անիծել: Վրէպ վրիպակ: Ասպարէզ — ասպարիզանալ: Գէջ — զիջանալ: Լէզ — լիզել: Գէշ (գէս) գէս) գէր) դէզ) դէպ — զիպչիլ) դէս) դէմք) դէպք — զիպուածք: Զէնք, ընդդէմ) ծէս) կէս, հանդէպ) հանդէս) հրկէզ) ձկթ — ձիթենի) մէզ) մէջ) մէջք) յառաջադէմ) շէկ) շէն) շէնք) շէջ) պատուէր) նուէր) հրաւէր) պարտէզ) ջրվէժ) սէզ) սէր) ստէպ) վէճ) վէմ) վէրք) վէպ) տգէս) տէզ) տէր) անօրէն) վոխարէն) քէն) սէզ — սիզապատ:

71. Հետեւեալ խօսքերի մէջ գտէք ք ունեցող բառերը և նոցա տակը զիծ քաշեցէք: — Պատից կախած է մի բարտէզ: Ախտածէս և աղէտաւոր մարդիկ եկեղեցում աղօթում և ալէլուիայ էին կարդում: Ծաղիկների առէչքները բացուեցան: Աղուէսը իւր որջը մտաւ: Գէթ ամէն մի մարդ կարողանար պարտաճանաչ լինել: Ծառերի տերևները ծածկուեցան զազպէնով: Եկեղեցու գմբէթին նրստած էր բուէճը: Գոմէշը ուժեղ է: Երէկ մեր տանու երէցը թեմակալի մօտ էր: Թէպէտ թէատրօն չեմ գնում, բայց այնտեղ պատահածները հակամասեմ լսելու: Ծոյլ տղան իմ աչքումն երբէք մէկ կուպէ-

կի արժէք չէ ունեցել: Զութակի սանրի բռնելիքը բէջ է կոչվում: Նազարէթը ժապաւէն գնեց: Եղևնի ծառից խէժ է դուրս գալիս: Գեղձի ծառին կռէզ կար: Ծէզը բացուելիս՝ զիւղացին անտառում խէչակ էր կտրում: Կայէնը Աբէլի դէմ խէթ ունէր: Ուղտի կռնակի աւելամիսը կուակէն է կոչվում:

72. Կոճղեղաւոր բոյսերը մեծ մասամբ կծու համ ունին: Գարբինը ծեծում է հրաշէկ երկաթը: Հէնց մաթէմատիկայից եմ ես շատ դասեր առնում: Մի հէզ աղջիկ մեն-մենակ աղքատութիւն էր անում: Հրէան պարէն էր վաճառում: Հայրս տան առաջ պատնէշ քաշեց: Ես նարգէս ցանեցի: Կօշկակարը շրէշ էր գործածում: Շահէնը զիշատող թռչուն է: Զէզօք մարդիկ զխացաւանք չեն քաշում: Ամենքը պէտք է սակաւապէտ լինին: Ռուբէնը վէզ էր խաղում: Քամին վէտ-վէտ վրչում էր: Սա վէս-պնդազլուխ մարդ է: Որդին հօր պատուին վրէժխնդիր է: Սալամ թռչունին տոււէճ են ասում, շորի ծայրի կտրուածքին — տրէզ) խեղձ) թշուառ մարդուն — փէք: Քրիստոնէական օրէնքը քրէական յանցաւորին պատիժ է սահմանում: Մի Ֆէսաւոր մարդ ինքն իրան խօսում էր: Գուք ձեզէն) մենք մեզէն — դուք ձեզ ու ձեզ) մենք մեզ ու մեզ:

73. Վերոյիշեալ երեք վարժութիւնների միջից ք-ով գրուող բառերը ջոկեցէք և այբբենական

կարգով ձեզ համար մի աղիւսակ կազմեցէք: Բացի այդ բառերից՝ աշխարհաբար լեզուի մէջ ուրիշ Կ-ով գրուող բառեր հազիւ թէ պատահին:

74

Փոքրիկ	Փոքրիկ-ը՝ ցոյց է տալիս Հաղիանուչի որպիսութիւնը.— Խնչպիսի Հաղիանուչը: Երկալմանկ բառ է. ունի երկու ձայնաւոր— ա, է, և չորս բաղաձայն— փ, չ, ք, չ:
Հաղիանուչը	Հաղիանուչը՝ շնչաւոր առարկայի անուն է: Գործ կատարողն է.— ո՞վ տեսաւ: Բաղմալմանկ բառ է. ունի երկու ձայնաւոր— ա, ւ, երկու երկբարբառ— ա, ա և չորս բաղաձայն— ւ, ւ, շ, շ:
տեսաւ	Տեսաւ՝ Հաղիանուչի գործողութիւնն է.— Խնչարեց Հաղիանուչը: Երկալմանկ բառ է. ունի երկու ձայնաւոր— ւ, ա և երեք բաղաձայն— ա, ա, ա:
հորը:	Հորը՝ շնչաւոր առարկայի անուն է: Գործ կատարողը չ'է: Ո՞ւմ տեսաւ: Երկալմանկ բառ է. ունի երկու ձայնաւոր— օ, ւ, և երկու բաղաձայն— ւ, ւ:


75. Հետեւեալ խօսքերի մէջ գտէք առարկան, որպիսութիւնը և գործողութիւնը: Իմացէք թէ ամեն մի բառ քանի վանկ ունի և իւրաքանչիւր վանկի մէջ ինչ ձայնաւոր և բաղաձայն տառեր կան. բոլոր խօսքերը լուծեցէք ձեր տետրակների վերայ վերևի օրինակի պէս:

Փոքրիկ Հայկանուչը տեսաւ հորը: Հայրը բռնով մանր ու փայլուն սերմեր էր ցանում: Անուշ խօսքը տուն կը շինէ: Դառը խօսքը տուն կը քանդէ: Թունդ քացախը իր ամանը կը ճարացնէ: Կարմիր ձուն զատիկն կը սազայ: Աշխատասէր մարդու դռանը քաղցածութիւնը չի մտնուի: Մլաւան կատուն մտնի չի բռնիլ:

Անցա՛յի կրնո՛ւթիւնը: Ի՞նչից է կազմվում խօսքը: Բառերը Է՞նչ են ցոյց տալիս: Ի՞նչ է վանկը: Բառերը վանկերին նայելով, քանի՞ կարգ են լինում: Վանկերն ի՞նչից են կազմվում: Տառերը քանի՞ կարգ են բաժանվում: Որո՞նք են ձայնաւոր կոչվում: Ի՞նչի են ձայնաւոր կոչվում: Թուեցէ՛ք ձայնաւոր տառերը: Որո՞նք են բաղաձայն կոչվում: Ի՞նչի են բաղաձայն կոչվում: Թուեցէ՛ք բաղաձայն տառերը: Որո՞նք են երկբարբառ կոչվում: քա՞նիսն են և ի՞նչ տառերից են կազմվում: Վանկ կազմելու համար ի՞նչ հնչիւն անդամաւոր պէտք է: Ի՞նչ հնչիւններ կարող են լինել և չ'լինել: Արն է վանկերու հիմնական կանոնը. միաւով պատմեցէք վանկերու գլխաւոր կանոնները— երբ բառի մէջ մէկ բաղաձայն կայ, երբ երկու, երեք և այլն: Գրելու ժամանակ հնչիւններն ինչո՞վ են նշանակում: Ի՞նչ հնչիւնները գրեցէք, որոնց համար երկու տառ է դործ անվում: Քանի՞ գլխաւոր դործածութիւն ունի յ տառը: Ե՞րբ է նա կարգապիւում որպէս բաղաձայն, ե՞րբ կիսաձայն և ե՞րբ է անձայն մտում: Է հնչիւնի համար քա՞նի տառ ունինք: Ի՞նչ գործածութիւն ունին և և տառերը: ա հնչիւնը ի՞նչ տառերից է կազմվում և ի՞նչ գործածութիւն ունի: ւ հնչիւնը ի՞նչ տառ-

ուերից է կաղմկում և ի՞նչ գործածութիւն ունի: Բաւի սկզբ-
բում և վերջում ի՞նչ գործածութիւն ունին և օ տառերը:
Իսկ բառի մէջը օ ունեցող բառերի թիւը շատ է թէ սահմա-
նափակ: Ե և է տառերը բառի սկզբում, բառի վերջում, բառի
մէջը: Բառի մէջը է տառը քանի՞ կանոնի է ենթարկւում: Ե-ով
գրուող տառերն աղևտակը:

Թուեցէ՛ք բոլոր տառերը այբբենական կարգով և իրանց
անուններով:

Գ. 

ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ե Ն Թ Ա Կ Ա Յ.

76. Հաւը խօսեցաւ: — Այս խօսքի մէջ հ ա լ ի
մասին ենք խօսում: Օրը քայտեցաւ: — Այստեղ խօ-
սում ենք օր-ի մասին:

Հեռուեալ օրինակների մէջ զծով նշանակեցէ՛ք
թէ ո՛ւմ կամ ինչի՛ մասին ենք խօսում: — Խոտը
կանաչում է: Արևն է փայլում: Միծեռը զարնան
հետ մեզ մօտ է թռչում: Ծագեցաւ արեգակը:
Ծաղկեցաւ մանուշակը: Մեղուն թողեց իր փեթա-
կը: Արշալոյսը շուտ բացուեցաւ: Քրիստոս յարեաւ,
Քրիստոս յարեաւ: Առունները խոխոջացին: Ծառերն
բողբոջ արձակեցին: Ղաշար սիրուն զարդարուեցաւ:
Գեղեցկագոյն գարուն եկաւ: Ստեղծողն իւր առատ
ձեռքը բացարեց, արտեր, անտառներ հարստացրեց:

Ղաշարի ծաղիկները ցօղով ծածկուեցան: Տաւար ու
ոչխար արօտ դուրս եկան: Թանձր մէգերը երկրից
հեռացան: Ամէն կենդանիք զաշար լցուեցան:

Չուկը լողում է: Թռչունը թռչում է: Ծառե-
րը ծաղկում են: Սկսվում է գարունը: Հալվում են
ձիւները: Ղալիս է ամառը: Հասնում են արտերը:
Աշունն է զալիս: Ծառերը լաւ-լաւ պտուղ են
տալիս:

77. Երէքաֆործը վարեց հողը: — Այստեղ մենք
խօսում ենք երկրագործի մասին. ասում ենք՝
թէ ո՛վ վարեց: Չէնորսը ծովը փցեց մեծ ուս-
ման: Այստեղ խօսում ենք ձկնորսի վերայ. ասում ենք՝
թէ ո՛վ գցեց:

Չորսը հասած է: — Այստեղ խօսում ենք ջրի
մասին. ասում ենք՝ թէ ի՞նչն է հոսում: Գետը
սասուն է: — Այստեղ խօսում ենք գետի մասին. ա-
սում ենք թէ՛ ի՞նչն է ստռչում:

Վերոյիշեալ (76) օրինակների մէջ զտէք այն
առարկաները, որոնց մասին խօսում ենք և ամենքի
համար համապատասխան հարցեր դրէք:

§ 50. Այն առարկան, որի մասին
մենք խօսում ենք, Ենթակայ է կոչվում:

ա. Ենթական գլխաւոր առարկան է,
որի մասին խօսում ենք:

բ. Ենթական գործ կատարող առար-
կան է, որի մասին խօսում ենք:

գ. Ենթական իմացվում է՝ ո՞վ և ե՞նչ հարցմունքներով:

դ. ո՞վ հարցականը շնչաւոր առարկաների համար է:

ե. ո՞նչ հարցականը անշունչ առարկաների համար է:

78. Հետեւեալ օրինակների մէջ գտէք ենթական և նորան համապատասխան հարցը: — Սպիտակ ձիւնը ծածկեց երկիրը: Մառը մերկացաւ: Առուն սառեցաւ: Քարկացաւ այլնոր ձմեռը: Թռչունները հեռացան դէպի տաք երկիրներ: Ճնձղուկն իրան գործն սկսեց: Աարմիր արեւը բարձրացաւ երկինք: Արտուտը թրպրտաց: Նղբայրն ուսումնարանից եկաւ տուն: Փոքրիկ քոյրը բաներ հարցրեց: Նղբայրը բոլորը պատմեց: Ուսուցիչը նստում է աթոռի վերայ: Գասատանը գրատախտակ կայ: Աշակերտների առաջ դրած են քարետախտակներ: Ուսուցիչն ուսուցանում է: Աշակերտներն ուսանում են: Քանոնը կտարուեցաւ: Պատը քանդուեցաւ: Տունը շինուած է:

Ս Տ Ո Ր Ո Գ Ե Ա Լ .

79. Աշակերտը գրած է: — Այս խօսքի մէջ ենթական աշակերտն է: Ենթակայի մասին աւած է՝ թէ նա ե՞նչ էր անում—գրում էր: Գրած էր բառը ցոյց է տալիս աշակերտի պրածը:

Մանուկները խոզում էին: — Այս խօսքի մէջ ենթական է մանուկները: Մանուկների մասին աւուած է՝ թէ նոքա ե՞նչ էին անում—խաղում էին: Խոզում էին բառը ցոյց է տալիս ենթակայի պրածը, գործածը:

80. Հետեւեալ օրինակների մէջ գտէք ենթական, և այն բառը որ ցոյց է տալիս նորա պրածը, գործածը: Գործողութիւնն ցոյց տուող բառի սակը զի՞ծ բաշեցէք.

Սոխակը երգում է: Ծիծեռնակը ծլվում է: Ագռաւը գռաւում է: Գորտը կրկում է: Ամառը մանուկները գնացին դաշտը մորի բաղելու: Նրկրագործը երկիրը վարեց: Խոտը հաւաքեցին հնձողները: Մշակը բանելու կըզնայ: Գիւղացին կրկասէ կալը: Աղունն աղում է ջաղացպանը: Հացը թխում է հազթուխը: Կօշկակարը կարում է կօշիկներ: Կօշկակարը կօշիկներ է կարում: Կօշիկները կարում է կօշկակարը: Կօշկակարն է կօշիկներ կարում: Աշակերտներն առաւօտեան գնացին ուսումնարան: Մանուկները կրսովորեն դասերը:

81. Մասը մերկացաւ: — Այս խօսքի մէջ ծա-

ուր ենթակայ է: Ծառի մասին չէ ասած, թէ նա ի՛նչ արեց) ի՛նչ գործեց) այլ թէ նորան ի՛նչ եղաւ, ի՛նչ պատահեցաւ — մերկայաւ:

Փայտը կարուեցաւ: — Այս խօսքի մէջ ենթական է փայտը: Փայտի համար ասուած է, թէ նորան ի՛նչ պատահեցաւ, ուրիշները նորան ի՛նչ արին: Կտրուեցաւ բառը ցոյց է տալիս թէ փայտին ի՛նչ եղաւ, ի՛նչ պատահեցաւ:

82. Հետեւեալ օրինակների մէջ գտէք ենթական և այն բառը, ինչ որ ենթակայի մասին ասուած է, և ցոյց է տալիս թէ ենթակային ի՛նչ է պատահում, ի՛նչ է հանդիպում: — Գետերը սառչում են: Գաշտերը ծաղիկներով լցում են: Ծովն ալեկոծուեցաւ քամուց: Երկիրը ծածկուեցաւ ձիւնով: Արձիճը հալուեցաւ կրակի մէջ: Օրը տաքացաւ: Հունձը վերջացաւ: Թելը կրկտրուի: Խոտը կըհընձուի: Ջուրը կըխմուի: Հացը կ'ուտուի: Երբերը կըմաշուին: Տները կըշինուին:

Թռչունը իւր համար բուն է շինում: Թռչունը շինում է բուն: Բունը շինվում է թռչունից: Ծիծեռնակը կտուցով խոտ բերեց: Յինը յափշտակեց հաւի ձագը: Հաւի ձագը յափշտակուեցաւ ցինից: Մայրս գոլորշիացրեց ջուրը: Ջուրը գոլորշացաւ ջերմութիւնից:

83. Մեղքը Գողջը է: — Այս խօսքի մէջ ենթական է մեղքը: Ենթակայի մասին չէ ասած, թէ նա ի՛նչ արեց) կամ նորան ի՛նչ պատահեցաւ)

այլ ասած է) թէ նա քաղցր է: Քաղցր է բառը ցոյց է տալիս, թէ մեղքը ի՛նչպէս է:

Ապակին թափանցիկ է: — Այս խօսքի մէջ ենթական է ապակին. ապակու մասին ասուած է, որ նա թափանցիկ է: Թափանցիկ է՝ ցոյց է տալիս թէ ապակին ի՛նչպէս է:

84. Հետեւեալ օրինակների մէջ գտէք ենթական և այն բառը, որ ենթակայի մասին ասուած է. իմացէ՛ք թէ ենթակայի մասին ասուած բառը ի՛նչ է ցոյց տալիս.

Քացախը թթու է: Լեղին դառն է: Աշխատանքը ծանր է: Բարձր փափուկ է: Ծովը խոր է: Ծառը բարձր է: Չմեռը գիշերները երկար են: Ամառը գիշերները կարճ են: Աշակերտը աշխոյժ է: Աշակերտը պատրաստեց դասերը: Մայրս պաւաւ է: Մայրս պառաւում է: Մայրս գնաց եկեղեցի: Լուսինը պայծառ է: Լուսինն աղօտանում է: Լուսինը լուսաւորեց երկիրը: Ամպերը թանձր են: Ամպերը թանձրացան: Ամպերը անձրև թափեցին: Մեղուն աշխատասէր է: Մեղուն թուլացաւ տաք գոլորշուց: Մեղուն զարթեց և թաւալ—գնաց դաշտը:

85. Խնձորը պտուղ է: — Այս խօսքի մէջ խընձորը ենթակայ է: Ենթակայի մասին ասուած է, որ նա պտուղ է. պտուղ բառը չէ ցոյց տալիս, թէ ենթական ի՛նչ է անում, չէ ցոյց տալիս, թէ ենթակային ի՛նչ է պատահում, կամ նա ի՛նչպէս է) այլ ցոյց է տալիս, թէ խնձորը ի՛նչ է, ինչ բան է:

Գիրքը դասական առարկայ է:— Այս խօսքի մէջ գիրքը ենթակայ է: Գրքի մասին ասուած է, որ նա առարկայ է: Առարկայ է ցոյց է տալիս թէ գիրքը ի՞նչ է:

76. Հետեւեալ օրինակների մէջ գտէք ենթական և իմացէ՛ք, թէ ենթակայի մասին ի՞նչ է ասուած և այդ ասածը ի՞նչ է ցոյց տալիս:— Կովքը ընտանի կենդանի է: Գայլը զազան է: Միծեռնակը թռչուն է: Գեղարքունին ձուկն է: Մանուշակը ծաղիկ է: Անանուխը խոտ է: Խոտը բոյս է: Երկաթը հանք է: Զուրը խմելիք է: Հացն ուտելիք է:— Յորենը հացաբոյս է: Յորենը օգտակար է: Յորենը չորանում է: Յորենը բուսնում է: Աշակերտը մարդ է: Աշակերտը փոքր է: Աշակերտը հիւանդացաւ: Աշակերտը գրեց դասը: Ձին անասուն է: Ձին ուժեղ է: Ձին բռն է կրում: Ձին սատակեցաւ: Հայրս մարդ է: Հայրս բարի է: Հայրս նեղացաւ ինձանից: Հայրս ներեց ինձ: Մառը բոյս է: Մառը բարձր է: Մառը պտուղ է տալիս: Մառը կտրվում է:

§ 51. Այն բառը, որ ցոյց է տալիս՝ ա. թէ ենթական (առարկան) ի՞նչ է անում, բ. թէ նորան ի՞նչ է պատահում, գ. թէ նա ի՞նչպէս է և դ. թէ նա ի՞նչ է, կոչվում է սորոգեալ:

Արեմն ստորոգեալը չորս տեսակ է լինում՝

ա. Ենթակայի արածը կամ գործածը ցոյց տուող:

բ. Ենթակային պատահածը, հանդիպածը ցոյց տուող:

գ. Ենթակայի ի՞նչպէս լինելը ցոյց տուող:

դ. Ենթակայի ի՞նչ լինելը ցոյց տուող:

Կարճ՝ ենթակայի մասին պատահածը կոչւում է սորոգեալ¹⁾:

Ենթական գտնելու համար պէտք է ստորոգեալի՞ն հարց տալ, իսկ ստորոգեալը գտնելու համար՝ ենթակայի՞ն:

87. Հետեւեալ օրինակների մէջ գտէք ենթական և ստորոգեալը և իմացէ՛ք, թէ ի՞նչ հարցերի են նոքա պատասխանում:— Թռչունը նստած էր վանդակի մէջ: Մի մարդ վանդակից արձակեց թռչունը: Թռչունն ուրախ երգ երգեց: Թռչունը գեղեցիկ էր: Թռչունը արտուտիկ էր: Գարունն սկսուեցաւ: Գարունը մեղմ է: Գարունը ասրուայ գեղեցիկ եղանակին է: Շոգ ամառն եկաւ: Մարդկանց գործերը շա-

¹⁾ Սորոգեալ նշանակում է ստուգապէս ասուած:

տացան: Աշունն անձրևային էր: Աշնանը թռչունները գնում են հեռու երկիրներ:

Մենք արժանացանք ուրախ մայիսին.
Ծառեր—ծաղիկներ ողջ կանաչեցին.
Կապոյտ երկնքում փոքրիկ ամպերը
Ուրախ ու զուարթ առաջ վազեցին:

§ 52. Ենթական և ստորոգեալը մի ամբողջացած միտք են յայտնում: Ամբողջացած միտքը ասվում է նախադասութեան և ստորոգեալը նախադասութեան անդամներն են ¹⁾:

Ամէն մի ամբողջացած նախադասութիւնից լետոյ դրվում է ստորակէտ կամ վերջակէտ:

Ստորակէտ դրվում է՝ երբ որ մի

¹⁾ Կարող է պատահել այնպիսի նախադասութիւն, որի մէջ թէև ենթական չէ գրուած, բայց հարցի միջնորդութեամբ կամ առանց հարցի էլ, պարզ հասկացվում է, թէ սրն է ենթական: (Գնում եմ: Հնձեց: Երգեցիր):

Իսկ երբեմն պատահում է և այնպիսի նախադասութիւն, որի մէջ ենթական չ'կայ և հարցմունքի միջնորդութեամբ էլ որոշ չէ իմացվում, թէ սրն է ենթական: (Յուրտ է):

նախադասութիւն միւս նախադասութեան մասն է կազմում:

Վերջակէտ դրվում է՝ երբ որ նախադասութիւնը կապ չ'ունի իւր հարեան նախադասութեան հետ և նորա մասը չէ կազմում:

Նախադասութիւնը միշտ պէտք է գլխատառով սկսել: Վերջակէտից լետոյ ևս նոր նախադասութիւնը գլխատառով է սկսվում:

88. Գտէ՛ք ենթական և ստորոգեալը:— Մարդը ման է դալիս: Զուկը լողում է: Մարդն էլ լողում է: Թռչունները թռչում են: Գորտերը ցատքոտում են: Սձերը սողում են: Սրէը լոյս է տալիս: Աքաղաղը կանչում է: ձրագը վառվում է: Սչքը մտրմընու ճրագն է: Մարմնու ճրագն աչքն է: Գեղեցկապէս փայլում են աստղերը: Ուրախ թռչկոտում է թռչնիկը: Սռաւօան օրուայ մասն է: Սռաւօտը մարդիկ լուացվում են:

89. Հետևեալ զոյգ բառերից նախադասութիւններ կազմեցէ՛ք:— Ժամկոչ—զանդահարել. երգողներ—երգել. գանգակ—գնդգնդալ. ժամաւորներ—աղօթել. դերձակ—կարել. լուացարար—լուանալ. խոհարար—եփել. առևտրական—վաճառել. երկրա-

գործ—վարել, զինուոր պատերազմել, քամի—փր-
 չել, կայծակ—փայլատակել, ամպ—որոտայլ տերև-
 ներ—թափուիլ, գետեր—սառչիլ, թռչուններ —
 թռչիլ, հայր—հոգայ, մայր—խնամել, քոյր—սի-
 ընլ, աշակերտ—կարդալ:

90. Հետևեալ նախադասութիւնները բաժա-
 նեցէ՛ք իրարից վերջակէտով և գլխատառեր զրէ՛ք:

Սրեգակը տաքացնում է անձրև է գալիս ձիւնը
 հալվում է հալվում է և սառուցը գետերը մեծա-
 նում են ջրերը յորգանում են ծառերը կանաչում
 են թռչունները վերադառնում են ամպը որո-
 տում է խնձորենին ծաղկում է շոգն սկսվում է օ-
 րերը երկարում են արտերը հասնում են խոտերը
 հնձվում են տափերը վարվում են մարդիկ տանջ-
 վում են շոգը զօրում է:

91. Հետևեալ նախադասութիւնները բաժանե-
 ցէ՛ք միմեանցից ստորակէտներով և վերջակէտնե-
 րով: Գլխատառերը զրէ՛ք: — Սշակերտան ուսումնա-
 րան գնաց որ դասերը սովորի նա առն է գնում
 իսկ ես գալիս եմ տանից գիւղացին վերադարձաւ
 հանդից որ եզները տանի զու տեսա՞ր այն թռու-
 չունը որը գեղեցիկ երգում էր տեսայ մի մարդ որի
 ձակատից քրտունը կաթիլ-կաթիլ թափվում էր
 ուղան ուսում է ինչ որ ձանկում է ով որ իւր հօ-
 րըն ու մօրը պատիւ տայ Աստուած էլ նորա գոր-
 ծերին յաջողութիւն կրտայ ինչ որ վարժապետը
 զաս էր առել բոլորը սովորեցի ուր որ ջուր չկայ

այնտեղ խոտ չէ կարող բուսնիլ երբ որ լուսանում
 է աշխատասէր մարդիկ գործի են գնում հէնց որ
 մթնում է հաւերը թառ են լինում ինչ որ կասես
 էն կըլես ինչ որ աշխատես էն կուտես ինձ տես
 քեզ լայ որտեղ որ ես պինդ կաց հացի կտրածը
 թուրը չի կտրիլ թրի կտրածը կըսողանայ լեզուի
 կծածը չի սողանալ:

92. Կազմեցէ՛ք նախադասութիւններ, որոնց
 ստորոգեալը ցոյց տայ՝ թէ առարկան ի՞նչ է ա-
 նում իսկ ենթակայ լինին հետևեալ անունները:—
 Գարբինը, ատաղձագործը, ուսուցիչը, աշակերտը,
 սոխակը, հաւը, աքաղաղը, լուսինը, անձրևը, ա-
 բլը, մամը, ձկնորսը, որսորդը, ձուկը, շունը, քա-
 մին, ծաղկը, կայծակը, գետը, հովիւը, սայլորդը,
 քահանան, ձին, կովը, հայրը, մայրը, խոհարարը,
 վարժապետը:

93. Նախադասութիւններ կազմեցէ՛ք, որոնց մէջ
 հետևեալ բառերը ստորոգեալ լինին: — Բզզում է,
 կրկում է, կրկնում է, մկկում է, մայում է, բառա-
 չում է, խոտանչում է, խրխնջում է, մրթմրթում է,
 մրմռում է, կաղկանձում է, կլանչում է, հաջում է,
 սոնում է, մնչում է, մլաւում է, ծվծվում է, որո-
 տում է, փայլատակում է, ճայթում է, ճրճում է,
 քանդվում է, լուսաւորում է, տաքացնում է, այ-
 րում է, այրվում է, վառում է, վառվում է, լալիս է,
 երգում է, կարդում է, կարդացնում է, ուսանում է,
 ուսուցանում է, կարում է, կարվում է, մաշում է,
 մաշվում է:

94. Կազմեցէ՛ք նախադասութիւններ) որոնց մէջ ստորոգեալը ցոյց տայ) թէ առարկան ի՞նչ է) իսկ ենթակայ լինին հետեւեալ բառերը. փարդը) միսը) արիւնը) բամբակը) ձուն) ապակին) քարը) քացախը) շաքարը) խաղողը) ջուրը) իւղը) ածելին) կացինը) թելը) թուղթը) պողպատը) ոսկին) արծաթը) մանուկը) հացը) փայտը) օձը) զետը) մանգաղը) գարունը) ամառը) աշունը) ձմեռը:

95. Կազմեցէ՛ք նախադասութիւններ) որոնց մէջ հետեւեալ բառերը ստորոգեալ լինին: — Կանաչ է) կարմիր է) ուրախ է) տխուր է) մանր է) խոշոր է) քնասակար է) օգտակար է) պիտանացու է) անպիտան է) աշխատասէր է) ծոյլ է) դժուար է) հեշտ է) փայլուն է) դժգոյն է) պինդ է) փափուկ է) կարծր է) դիւրաբեկ է) հեղուկ է) թանձր է) թափանցիկ է) անթափանցիկ է) բարակ է) հաստ է) կարճ է) երկար է) նեղ է) լայն է) բարձր է) ցածր է) ծուռն է) ուղիղ է:

96. Կազմեցէ՛ք նախադասութիւններ) որոնց ստորոգեալը ցոյց տայ) թէ առարկան ի՞նչ է) իսկ հետեւեալ բառերը ենթակայ լինին: — Ուռնին) տանձենին) յունվարը) մայիսը) գարունը) գետը) նապաստակը) գորտը) կաղինը) բալը) շունը) արջը) ձեռքը) ոտքը) դաստակը) մատները) զուլիսը) զէմքը) մեղուն) թիթեռը) կոտեմը) բրինձը) զնդակը) գրիչը) զիրքը) սեղանը) արօրը) աթոռը) հացը) ջուրը) հինգշաբթին:

97. Հետեւեալ նախադասութիւնները լուծեցէ՛ք՝ ենթակային և ստորոգեալին հարցեր տալով. — Ծաղիկները թառամեցան (ի՞նչերը թառամեցան — ծաղիկները՝ ծաղիկները ենթակայ: Ծաղիկներն ի՞նչ եղան — թառամեցան՝ թառամեցան ստորոգեալ): Խոտերը կանաչեցան: Ծառերը ծաղկեցան: Թռչունները թռան (ո՞վ թռաւ. ի՞նչ արին): Անտառը մերկացաւ: Գետինը սառաւ: Զիւնը հալվում է: Արշակը երգում է: Մինասը զրում է: Ռուբէնը խաղում է: Հայկը աշխատում է: Հայկը աշակերտ է: Հայկը աշխատասէր է: Նապաստակը փափկամազ է: Գետինը պինդ է: Գետը խոր է: Կաղամբը բանջար է: Ծիծեռնակը թռչուն է: Տունը շէնք է: Սահնակը կառք է: Աղէքսանդրը տրդայի անուն է: Արուսեակը աղջկայ անուն է: Անիւր սայլակի մասն է: Սեղանը կարասիք է: Ապրիլը զարնանային ամիս է: Յուլիսը ամարային ամիս է:

ՊԱՐՁԱՐԱՆՈՂ ԲԱՌԵՐ.

Գարնանային գեղեցիկ օրերն սկսուեցան: — Այս նախադասութեան մէջ գարնանային բառը ցոյց է տալիս թէ ո՞ր օրերն սկսուեցան. գեղեցիկ բառը ցոյց է տալիս. թէ ի՞նչո՞ւ օրերն սկսուեցան:

Գարնանային և գեղեցիկ բառերը զրուած են օրէր բառի համար:

98. Հետեւեալ նախադասութիւնների մէջ գտէ՛ք թէ նօսը զրա՞ծ բառերը ի՞նչին են վերաբերում, ո՞ր

բառի համար են դրուած: — Յո՛րդ դիշերն անցաւ: Պայծառ առաւօտը բացուեցաւ: Գեղեցիկ թռչունները զարթեցան: Կանաչ դաշտը փայլուն ցօղով ծածկուեցաւ: Ընդհանր կենդանիներն արօտ դուրս եկան: Վայրենի գազանները բները մտան: Հարուստ ամառն անցկացաւ: Խոնառ աշունն սկսուեցաւ: — Սպիտակ ձիւնը ծածկեց սարեր ու ձորեր: — Պայծառ աստղերը փայլում էին երկնքում: — Առաջին աշակերտը կարդաց դասը: Վերջին նստարանի վերայ նստած են կինգ աշակերտ: Երեք ճանապարհորդ միասին գնում էին: — Սենեակէ պատերը բարձր են: Ելեղեցո՛ւ գմբէթը գեղեցիկ է: Զեռ պարանոցը կոր է: Յովհաննէսը վերցրեց ընկերի գերքը: Գեղեցիկ թռչունը երգում է: Երկրորդ թռչունը երգում է: Արամի թռչունը երգում է:

Ձկնորսը չանգառով չափը բռնեց: — Այս նախադասութեան մէջ չափը ցոյց է տալիս թէ ձկնորսը չ'նչ բռնեց. չանգառով բառը ցոյց է տալիս, թէ չ'նչով բռնեց: Ձկնորսը գետից չանգառով ձուկը բռնեց: — Այս նախադասութեան մէջ էլ գետից բառը ցոյց է տալիս, թէ չ'րո՞ւնց բռնեց: — Զո՛ւնը, չանգառով գետից բառերը դրուած են. բո՛ւնց բառի համար — ստորոգեալին են վերաբերում:

99. Հետեւեալ նախադասութիւնների մէջ գտէ՛ք, թէ նոսր գրած բառերը ի՞նչ են ցոյց տալիս, ո՛ր բառի համար են դրուած: — Գիւղացիք չմտառ րոտ շորք են հագնում: Աճառը ծառերի պտուղները հասունանում են: Աշխատասէր աշակերտները սովորում են իրանց րոտերը: Տանը եղբայրը սարքում էր

իւր գո՛ւնը: Այսօր հովիւը ծախեց երեք փոփոխ գոնուհներ: Երէկ հայրս գնեց մեզ համար հարչա՛ւոր գրքեր: Կօշիակարը շոր է աշխատում խոնառում: Կարբինը մեծ հոբճով ուժգին խփում է րոտ երչակին: Կարբինը երչակից շինում է լա՛ւ-լա՛ւ հացիններ: Զմեռը ջուրը սառչում է ցրտառեւիներից: Աճառը րոտառեւիներից ջուրը գոլորշիանում է: Կովը օղորտաբաններով որոճում է խորը: Մարդիկ իրանց չեռով հաւաքում են երչի մոտոտ րոտքը: Ստեղծողը ամենայն ժամանակ վարձատրում է աշխատարներին: Փրկիչը օրհնում է բարի մտնուհներին:

§ 53. Այն բառերը՝ որոնք դրվում են

ենթակալի կամ ստորոգեալի համար և նույն միտքը պարզում ու լրացնում են, կոչվում են պարզաբանող բառեր:

Պարզաբանող բառերը միմիայն ենթակալի և ստորոգեալի համար չեն դրվում, նոքա մէկ-մէկու ևս կարող են պարզաբանել:

Պարզաբանող բառերից ոմանք դրվում են առարկայի համար, իսկ ոմանք դործողութան համար:

100. Վերևի (99) վարժութեան մէջ իմացէ՛ք, թէ պարզաբանող բառերից որո՞նք են առարկայի

Համար դրուած և ո՛րոնք զործողութեան: Սրտա-
գրեցէ՛ք առարկայի և զործողութեան Համար դը-
րուած բառերը ջոկ-ջոկ՝ այն բառերի հետ, որոնց
Համար դրուած են՝ երկու խումբ բաժանելով նոցա:
(Տո՛ւ շո՛րեր: — Հոգնո՛ւմ են չի՛ւրը):

§ 54. ա. Ենթական և ստորոգեալը
նախադասութեան գլխաւոր անդամներն են:

բ. Պարզաբանող բառերը նախադա-
սութեան երկրորդական անդամներն են:

գ. Առանց ենթակայի և ստորոգեալի
նախադասութիւն չի լինիլ:

դ. Առանց պարզաբանող բառերի նա-
խադասութիւն կարող է լինել:

101. Հետևեալ նախադասութիւնների մէջ գը-
տէ՛ք պարզաբանող բառերը. որոշեցէ՛ք թէ ի՞նչ
հարցերով են իմացվում և ո՛ր բառին են վերա-
բերում.

Փոքրիկ Հայկանուշը տեսաւ իւր հօրը: Հայրը
բռնով մանր ու փայլուն սերմեր էր ցանում: Հայրը
սերմերը ցանում էր վարած ցելում: Երկու շաբա-
թից յետոյ ցելը ծածկուեցաւ կանաչ մետաքսեայ
խոտերով: Անաչը փոքր առ փոքր բարձրացաւ:
Յօղունների զլիններին կապտագոյն ծաղիկներ երե-
ւեցան: Երբ որ վուշը հասաւ Հայկանուշի ծնողըը
արմատից պոկեցին նորան: Փետած վուշից մանրիկ

խուրձեր կապեցին: Վուշից ստանում են համեղ
ձէթ և պատուական թել: Վուշի թելից գործում
են սպիտակ քաթան: Քաթանը հինում են սորքի
վերայ: Տորքը սարքում են խրճիթներում:

Մանուկը պարտիզում բռնեց մէկ սպիտակ թի-
թեռ: — Մի ծեր մարդ ապրում էր իւր պառաւ կնոջ
հետ: Պառաւը չար կին էր: Ծերը բարի մարդ էր:
Իրիկնաժամի զանգակը տուին (ո՞վքեր).

Բարեպաշտ մարդկանց ժամ հրաւիրեցին:

102. Ստորոգեալին պարզաբանող բառեր տուէ՛ք.
— Հնձողները հնձեցին (ի՞նչ): Զկնորսները բռնե-
ցին (ի՞նչ): Մարդիկ հնձում են ցորենը (ինչո՞վ
ե՞րբ, ի՞նչպէս): Ես փող տուի (ինչե՞ն, ի՞նչքան,
ե՞րբ): Պտուղները հասնում են (ե՞րբ, ի՞նչպէս,
ի՞նչքան, ինչե՞ վերայ): Կարբինը շինում է (ի՞նչ,
ինչե՞ց, ինչո՞վ, ի՞նչպէս, ինչե՞ համար): Մանուկը
գրեց (ի՞նչ, ո՞ւմ, ինչո՞վ, ե՞րբ, ի՞նչքան, ո՞րտեղ,
ի՞նչպէս): Գիւղացիք սերմում են (ի՞նչ, ինչո՞վ,
ի՞նչպէս, ի՞նչքան, ո՞րտեղ, ե՞րբ, ինչե՞ համար):
Վարդիկ աղօթում են (ո՞րտեղ, ի՞նչպէս, ի՞նչքան,
ո՞ւմ): Զին ուտում է (ի՞նչ, ի՞նչքան, ի՞նչպէս):

103. Հետևեալ նախադասութիւնների մէջ ա-
ռարկաների մօտ աւելացրէք պարզաբանող բառեր.
— Զմեռն սկսուեցաւ (ի՞նչպիսի ձմեռը): — Յո՛ւրս
ձմեռն սկսուեցաւ): Ամառն եկաւ (ի՞նչպիսի): Ա-
րևը լուսաւորում է (ի՞նչպիսի, ի՞նչպէս): Աղուէտը
փորում է (ի՞նչպիսի աղուէտը, ի՞նչ է փորում):

1) Առարկային պարզաբանող բառերը միշտ առար-
կայից նախադաս են դրվում:

Նապաստակը վախեցաւ. (ի՞նչպիսի նապաստակը, ո՞ւր մնից): Մանուշակը բացուեցաւ (ի՞նչպիսի, ե՞րբ): Եղբայրն եկաւ (ո՞ւր եղբայրը, ինչո՞վ): Պատերը քանդուեցան (ինչե՞ պատերը, ինչե՞ր): Մայրը կառնեց (ո՞ւր մայրը, ի՞նչ, ո՞ւր համար): Ձին արշաւում է (ո՞ւր ձին, ի՞նչպէս): ձղները բարձրացել են (ինչե՞ ձղները, ի՞նչ քան): Եղբայրս բերեց (ո՞ր եղբայրդ, ի՞նչ, քանի՞սը): Քոյրս տարաւ (ո՞ր քոյրդ, ի՞նչ, քանի՞սը):

104. Հետեւեալ նախադասութիւնները հարցերով լուծեցէ՛ք:— Վայրենի այծը ման էր գալիս բարձրագիւր ժայռի մերկ լանջի վերայ: Ներքեւ՝ սարի ստորոտում թափառում էր քաղցած գայլը: Խորամանկ գայլը հրաւիրեց ճարպիկ այծին, որ ցած գայ հիւթալի խոտ ուտելու: Զգոյշ այծը ահանջ չարեց գայլին և մնաց վերեւ՝ սարի լանջին: — Բարի խօսքը տուն կը շինի: — Անուշ խօսքը քար կը ծակի: — Ս. գուաւի խօսքով վարդավառին ձիւն կը գայ: — Թունդ քացախը իւր ամանը կը ճաքացնի: Բարի անունը աշխարհային հարստութիւնից լաւ է: — Վուշտը սովածին մանր կը բրդի: — Ուրագն իր կոթը չի տաշիլ: — Ճրագն իր տակը լոյս չի տալ: — Սնչնորհ մարդու լեզուն երկար կը լինի: — Սուտ ասողի տունը կրակ ընկաւ, ոչ ոք չ'հաւատաց: — Վատ մարդը զատկին էլ վատ կը լինի: — Գարէ հացը ցորեն հացի աղքատ եղբայրն է: — Փայտէ ամանով կերակուր չեն եփիլ (ո՞վ քեր): Առաւօտուայ շաւր լաւ է, քան իրիկուայ խէրը:

105. Հետեւեալ նախադասութիւնները լուծեցէ՛ք ներքև նշանակած օրինակին համաձայն: — Թրխագոյն կիւն ուրիշ թռչունների բնի մէջ է ձուածում: Մոխրագոյն նապաստակը ցողապատ մարգագետիններում հիւթալի խոտ էր որոնում: Աշնանը ծառերի դեղնած տերևները թափում է սառն քամին: Չմեռը ձիւնի սպիտակ քուլաները ծածկում են սառած երկրի երեսը: Թխաթեւ արծիւը իւր բունը շինում է ամենամեծ կաղնիների գագաթին: Գիշերները նրբագագ չղջիկը յաջողութեամբ կոտորում է գիշերային փնասակար միջատներին: Առողջակազմ հնձողները իրանց սուր-սուր մանկաղներով արագ-արագ հնձում էին աշնացանի հասունացած արտերը:

Թխագոյն	ա. Ածուճ է:
կիւն	բ. Ո՞վ է ածում:— Կիւն. կիւնն' ենթակալ է: գ. Կիւն ինչ է անում:— Ածուճ է. ածում է՝ ստորոգեալ է:
ուրիշ	դ. Ի՞նչ է ածում:— Չու. ձու՝ պարզաբանող բառ է՝ ստորոգեալի համար դրուած:
թռչուն-	ե. Ո՞րտեղ է ածում:— Բնի մէջ՝ պարզաբանող բառ է՝ ստորոգեալի համար դրուած:
ճերի	զ. Ո՞ւր բնի մէջ:— Թունսն' էրբ. թռչունների՝ պարզաբանող բառ է՝ բնի համար դրուած:
բնի մէջ	է. Ո՞ր թռչունների:— Ուրիշ. ուրիշ՝ պարզաբանող բառ է՝ թռչունների համար դրուած:
է	
ձու	ը. Ի՞նչպիսի կիւն:— Թխագոյն. թխագոյն՝ պարզաբանող բառ է՝ ենթակալի համար դրուած:
ածուճ:	

106. Միևնոյն ձևով լուծեցէ՛ք հետևեալները.
 Գիւղացին ցորեն էր տանում ջաղացը: Ջուա-
 լը ծակ էր: Մի քանի ցորենի հատիկներ թափուե-
 ցան ճանապարհին: Ծտերը խմբովին ցած եկան և
 կերան թափուած հատիկները: Աքաղաղը տեսաւ
 այս բանը. նա մօտ վազեց և հալածեց ծտերին:
 Ծտերը զանգատ արին բողէին: Բազէն իւր օրէնքով
 դատեց նորանց՝ առաջ պատռտեց աքաղաղին, յե-
 աոյ խեղդատեց ծտերին:

Գասազրբից շատ վարժութիւններ:

Անչի՞ց է կազմւում նախադասութիւնը:—Նախադասութիւն ինչի՞ն եւնք ասում:
 Ինչի՞ց է կազմւում նախադասութիւնը: Ո՞ր անդամներն են գըլ-
 խաւոր կոչւում: Որո՞նք են երկրորդական կոչւում: Ինչի՞ն եւնք
 ենթակայ ասում: Ի՞նչ հարցմունքներով է խմացվում ենթակայն:
 Ինչի՞ն եւնք ստորոգեալ ասում: Քանի՞ տեսակ է լինում ստորո-
 գեալը: Ի՞նչ հարցմունքներով է խմացվում նա: Ո՞ր բառերն
 ենք պարզաբանող ասում: Նախադասութեան ո՞ր անդամներէ հա-
 մար են դրվում նորա:

Դ.

ՆԱԽԱԳԱՍՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

ՀԱՄԱՌՕՏ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՆՆԵՐ.

ա. Աշակերտը կարդում է:

բ. Աշխատասէր աշակերտը կարդում է իւր դասը:

Առաջին նախադասութիւնը կազմուած է միմիայն
 գլխաւոր անդամներից: Երկրորդ նախադասութեան մէջ
 կան ն ա և պարզաբանող բառեր:

§ 55. Այն նախադասութիւնը՝ որ մի-

այն գլխաւոր անդամներից է բաղկացած,
 կոչվում է համառօտ նախադասութիւն:

Այն նախադասութիւնը, որի մէջ բա-
 ցի գլխաւոր անդամներից կան և պար-
 զաբանող բառեր, կոչվում է ընդարձակ նա-
 խադասութիւն:

107. Գտէ՛ք համառօտ և ընդարձակ նախադա-
 սութիւնները:— Թռչունը թռչում է: Արգող թռչ-
 չունները ձմեռը հեռանում են օտար երկիրներ:
 Գիւղացին աշխատում է: Գիւղացին գարնանը արօ-
 րով վարում է հողը: Արտերը կանաչում են: Հըն-
 ձողներն արտերը հնձում են սուր մանգաղներով:

Ծառերը ծաղկում են: Խոտը կանաչում է:
 Ձիւնը սպիտակ է: Սոխակը տարազնաց թռչուն է:
 Հաւը ընտանի թռչուն է: Գարնանը ձիւնի տակից
 գլուխը հանում է սիրունիկ ձնծաղիկը: Կապուտակն
 մանուշակը գարնան կարապետն է:

108. Հետեւեալ նախադասութիւններն ընդար-
 ձակեցէ՛ք:— Կովը բառանջում է: Շունը հաջում է:
 Ձին ուտում է: Խոտը բուսնում է: Աշակերտը գըլ-
 րում է: Արևը լուսաւորում է: Վարժապետն ու-
 սուցանում է: Մայրս կարում է: Երկրագործը հեր-
 կում է: Հացթուխը թխում է: Գերձակը կարում է:

109. Հետևեալ նախադասութիւնները համա-
 ռօտեցէ՛ք:— Մէկ փոքրիկ երեխայ կար: Ծնողքն ու-

զարկեցին նորան ուսումնարան: Թռչունները երգում էին անուշիկ ձայնով: Երեխայի սիրաբ փոխուեցաւ: Նա չէր կամենում դասի գնալ:— Յուրտ գիշերն անցաւ: Առաւօտեան զովը տարածուեցաւ օդի մէջ: Փոքրիկ ամպերը բարձրացան երկինքը: Ասողերը մինը միւսի յետեից շիջան: Գարունը իւր բոլոր փառահեղութիւնով ամէն շնչաւորների իւր հրաշալի տպաւորութիւնը ներշնչեց: Ընտանի կենդանիները սէզապատ դաշտերում առատ խոտն ուտում են: Թռչուններն իրանց աղուամազ ձագերի համար կերակուր են տանում:

ՊԱՐՁԱԲԱՆՈՂ ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

- ա. Գարնանային գեղեցիկ օրերն սկսուեցան:
- բ. Երկու մանուկ խաղում էին միմեանց հետ:— Առաջին մանուկը մեծ էր իւր ընկերից:
- գ. Թագաւորի պալատը գեղեցիկ կերպով դարբարած է:

§ 56. Նշանակած բառերը դրուած են առարկայի համար և նրան պարզաբանում են: Առարկային պարզաբանող բառերը կոչվում են որոշող: Որոշող բառերը մի որեւիցէ առարկայ շոկում են իրան նրման ուրիշ առարկաներից:

Որոշող բառերը երեք տեսակ են՝ որ-

պիսութիւնը որոշող՝ գեղեցիկ, գարնանային. որբանութիւնը— քանակութիւնը որոշող՝ երկուսուսըն, երկուրդ. պատկանելութիւնը— ումը լինելը որոշող՝ Լաֆաւորի գեղացու, Կաղապու: ¹⁾

110. Հետեւալ նախադասութիւնների մէջ գրաւէր որոշող բառերը:— Յուրտ ձմեռն անցաւ: Գեղեցիկ դարունն սկսուեցաւ: Բացուեցան անուշահոտ ծաղիկները: Զարդարուեցան ձմերային մերկ ծառերը: Տարագնաց թռչունները տաք երկրներից վերադարձան մեր աշխարհը: Մառերի տերեւները բացուեցան: Խոտերի ցողունները հասան: Վայրենի գազանները թողին իրանց որջերը:— Նրկնային մարմինները զիշերները փայլում են հանդարտ:— Տաք ամառը կը գայ. օգտակար պտուղները կը հասնին: Հարուստ հացաբոյսերը կը ծածանուին դաշտերում:— Մեր ուսումնարանում կան շատ աշակերտներ: Առաջին նստարանի վերայ նստած են հինգ հոգի: Նա նստում եմ երկրորդ նստարանի վերայ: Վերջին նստարանը դատարկ է: Իմ ընկերը շատ լաւ է սովորում: Նա վերցրի ընկերիս գիրքը: Ուսումնարանի բակը շատ մեծ է: Մեր պարտէզն ընդարձակ է: Պարտիզի ծառերը պտղատու են:

¹⁾ Մանօթ. Վերջին տեսակ որոշողներին ցատկացուցիչ էլ են ասում:

Մեր քաղաքում կայ բարձր եկեղեցի: Եկեղեցու գմբէթը ծածկած է մետալով: Երկրորդ եկեղեցին փոքր է:—Գեղեցիկ թոչունը թռաւ:—Արամի թոչունը թռաւ: Մէկ թոչուն թռաւ:—Արամի գեղեցիկ թոչունը թռաւ:

111. Վերեւի (110) վարժութեան մէջ եղած որոշող բառերը խումբերի բաժանեցէք:

112. Գրեցէք ձեզանից կամ արտադրեցէք ձեր դասից մի քանի նախադասութիւններ՝ որոշող բառերի իւրաքանչիւր տեսակի վերայ:

113. Որոշող բառերի տակը գիծ քաշեցէք.

Ո՞ր էս առաջ գնում, խեղճ ոտիկ ծառի—ն,
Տե՛ս) չ՛ձգեն քեզ ալիք անդունդը ծովի—ն:
Ինչպէս անտէր որբիկ՝ թշուառ, անպաշտպան,
Որ ընկել է ձեռքը չարանեղ մարդկան,
Չես ունենալ, ո՛ստիկ, ազատութեան հնար.
Ձոհ կըլնիս, խեղճ իկ, ալեաց չարաչար:

Աստ՛ դու ինձ, ոստդ վարդի,
Ո՞ր էս ծլել, ո՞ր էս ծաղկել,
Ո՞ր հովիտի կամ ո՞ր դաշտի
Ձարդարանք էս դու եղել.
Ո՞ր անգութի ձեռն է քաղել
Քեզ քո թփից մայրենական,
Կամ ո՞ր անգութն է քեզ անկել
Այս աշխարհում պանդխտական:

- ա. Յովհաննէս աշակերտը կարդում էր:
- բ. Իմ ընկեր Յովհաննէսը կարդում էր:
- գ. Մասիս սարը ձիւնապատ է:

§ 57. Վերեւի օրինակների մէջ նշանակեալ բառերը միևնոյն առարկայի անունն են, որին պարզաբանում են: Նոքա բացայայտ կերպով ցույց են տալիս, թէ առարկան ո՛վ է կամ ո՛րն է. — ո՞ր աշակերտը՝ Յովհաննէս. ո՞ր Յովհաննէսը՝ Իմ ընկեր. ո՞ր սարը՝ Մասիս:

Միևնոյն առարկայի երկու անուններից մինը, որ պարզաբանում է միւսին, կոչվում է Բացայայտիչ:

Բացայայտիչն առարկայի երկու անուններից այն է՝ որ որոշեալ յօդ չ'ունի և սովորապէս նախադաս է:

114. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէ՛ք բացայայտիչ բառեր: — Հայոց Աբգար թագաւորը հաւատաց Քրիստոսին: Վարդան սպարապետը ազատեց Հայաստան աշխարհը պարսկական բռնութիւնից: Տրդատ թագաւորը Հայաստան աշխարհի հզօր վեհապետներից մինն էր: Հրազդան գետակը իւր սկիզբն առնում է Գեղամայ լճից և

անցնելով Երևան քաղաքը, Մասիս սարի ստորոտում խառնվում է Երասխ գետի հետ:

115. Գրեցէ՛ք մի քանի նախադասութիւններ ձեր բարեկամների, ուսուցիչների, ծանօթների, ընկերների, ձեր քաղաքի, գիւղի, ձեր նահանգում եղած լեռների, գետերի, լճերի անուններից Բայաջապիչ բառերով:

ա. Աշակերտը գրում է:

բ. Աշակերտը գրում է դասը գրչով:

§ 58. Առաջին նախադասութիւնը համառօտ է: Երկրորդ նախադասութեան մէջ պարզաբանող բառերը դրած են պարագետի համար և նախադասութեան միտքը լրացնում են: Լրացնող բառերը խմացվում են՝ ո՞ւմ — ի՞նչ, ո՞ւմ — ի՞նչի՞նչ, ո՞ւմ — ի՞նչի՞ց, ո՞ւմ — ի՞նչով հարցերի միջնորդութեամբ:

116. Հարցերով գտէ՛ք լրացնող բառերը: — Հայրը սիրում է իւր որդուն: Որդին յարգում է իւր հօրը: Հայրը որդուն գիրք տուեց: Որդին հօրը շնորհակալութիւն արեց: Գիւղացին կարեց ծառը: Որսորդն սպանեց մի եղնիկ: Մայրը կանչեց իւր ազջկան: — Ես փողերս գրքի տուի: Զուրը հարկաւոր է թռչուններին և կենդանիներին: Վազելիս

գու ոտդ քարին խփեցիր: — Մենք ծառից պտուղ քաղեցինք: Գուք բարեկամից նամակ կ'ստանաք: Վարպետը ոսկուց շինեց գեղեցիկ շղթաներ: Ես վաճառականից գնեցի մի գլխարկ: — Երկրագործն օրավարը վարում է արօրով: Հայրն ուրախանում է իւր զաւակներով: Մենք աչքով տեսնում ենք, աշականջով լսում ենք, քիթով հոտոտում ենք, լեզուով ճաշակում ենք, իսկ մասներով շօշափում ենք:

117. Հետեւեալ ստորագայների մօտ լրացնող բառեր դրէ՛ք: — Այլը կերու: Չկնորսը բունեց: Մայրըս կարեց: Պարտիզպանը քաղեց: Հնձողը հնձեց: Գերձակը ձեց: Հիւսնը շինեց: Վարժապետը կարգացրեց: Մայրն ստացաւ: Գայլը պատահեց: Արծիւը գիշատեց: Շունը պահպանում է: (Շունը պահպանում է հօսը յափշտակող զագաններից):

Այժմ աշակերտը տանը ուշիուշով կարգում է դասը:

Աշակերտը մի քանի անգամ կարգաց դասը՝ սովորելու համար:

§ 59. Նշանակեալ բառերը դրուած են գործողութեան համար, բայց նորա միտքը չեն լրացնում: նոքա ցույց են տալիս գործողութեան այլ և այլ պարագետներ՝ ա. Ժամանակը թէ՛ է՞ք է կատարվում գործո-

դուժիւնը, բ. Թէ ո՛րտեղ է կատար-
վում, գ. չե՛ւ թէ ի՛նչպէ՞ս է կատարվում, դ.
չանստիւն-նիւնը թէ ի՛նչչան կամ չո՛նի անգամ է
կատարվում և վերջապէս ե. նորոգելը թէ
ինչո՛ւ, ի՛նչ պարճառով է կատարվում:

Ուրեմն պարագայական բառերը լի-
նում են հինգ տեսակ՝ ժամանակական,
տեղական, որակական, քանակական, պատ-
ճառական:

Պարագայական բառերը գլխաւորա-
պէս հետեւեալ հարցերին են պատասխա-
նում՝ ե՞րբ, ո՞ւր — ո՞րտեղ, ի՞նչպէս, ո՞ր-
քան — ի՞նչքան — քանի՞ անգամ, ինչո՞ւ
— ինչո՞ւ համար:

118. Հետեւեալ նախադասութիւնների մէջ
գտէ՛ք պարագայական բառերը և որոշեցէ՛ք նոցա
տեսակները: Վ՛նչպէս գեղեցիկ էր երգում սոխակը
իւր երգը վարդի նորաբաց կոկոնի վերայ: Հ ա զ ի ւ
մթնեւէր և ահա մեզ սաստիկ տանջում էր ցուրտը
և անձրևը: Հայերից շատերին բռնի բանտը տա-
րան, շատերին էլ բռնաբար գերի վարեցին: Այսօր
սաստիկ հրդեհ յայտնուեցաւ քաղաքի մի ծայրում:
բարեբաղդաբար կրակը շուտ հանգաւ: Եւ զի-

տեմ հայերէն կարգաւ: Կու գիտես ուսերէն և
գաղիերէն խօսիլ: Մենք վրացեփար էլ գիտենք: Մէկ-
դի կանգնեցէ՛ք, պաշտպանուեցէ՛ք քաջաբար և կա-
մաւ անձնատուր մի՛ լինիք: Կամայ ակամայ պիտի
տաք ձեր գէնքերը: Կամայ գնացէ՛ք, մենք էլ շու-
տով կըհասնենք ձեզ: Ամենեւին փոյթօ չէ, թէ
դու յետ կըմնաս: Ես բոլորովն պատրաստ չէի,
երբ դուք կանչեցիք: Կսպառ մոռացել էի, թէ
խօսք եմ տուել: Շուտով գնանք, է՛լ աւելի շուտով
սկսենք գործը: Բնաւ չի կարելի յետաձգել այն:

119. Բնութեան գեղեցկութիւնը է՛լ չէր սփո-
վում ծերունուն. նորա երեսը չէր ժպտում այլ
եւս. մահուան մերձաւորութիւնը բոլորովին
շփոթեւէր նորան: Գիւղացին միայնակ կանգնած էր
բլուրի վերայ և ուշիուշով դիտում էր շրջակայքը,
ուր Արարիչը ձրի սփռել էր իւր առատ պարգևնե-
րը: Յաճախ մարդս այնպիսի բաներ է լսում, որ
ստուգիւ զժուարանում է հաւատալ: Մայրը ստէպ
թուղթ էր գրում իւր որդուն, որը անիրաւաբար
գրեթէ մոռացել էր նրան: Յանկարծակի՛ այն նե-
ղութիւնից յետոյ, արեգակը կըխաւարի: Ուրիշնե-
րի մասին խօսելիս՝ մեծապէս պէտք է զգուշանաս:
Աստուած յայանապէս խօսեցաւ Մովսէսի հետ:
Մովսէսը ուժգին զարկեց գաւազանով և ապառա-
ժից անմիջապէս առատ աղբիւր բղխեց: Վերջա-
պէս՝ քառասուն տարուց յետոյ, Կարայեւացիք հա-
սան քանանացոց երկիրը: Հայր և որդի բնտանե-

բար խօսում էին. հայրը մեղմաբար ցոյց էր տալիս որդուն կեանքի չարիքները: Յամբասանքը չարաչար խոցոտում է մարդու սիրտը: Անշուշտ կը հասկանանք, եթէ մինչև անգամ հարևանցի պատմէք մեզ Հայերի պարսութեան պատճառները: Ուշադիր մանուկը պիտի աւելի լսէ և սակաւ խօսէ: Ո՞ւր ես առաջ գնում: Ո՞րտեղից ես գալիս: Ուստի՞ կը գաս, դա՛րիք բլբուլ: Արտաքուստ զարդարած էր, բայց ներքուստ լի էր ապականութեամբ:

120. Ե՞րբ էք տեսել, որ այրին օտից գըլուխ պճնուի իւր զարդերով թանկագին: Աշխատասէրը միշտ հաց կ'ունենայ, երբէք չի սովել: Երբեմն էի լոյս, իսկ այժմ եմ խաւար: Մերթ որոտում ես, մերթ ամպում ես, մերթ մթնում ես շատ, անձրևում ես կաթ-կաթ: Մերթ հարաւային հողմի նման հնչում ես խիստ սաստի, ես ընկում եմ զգաստ: Լաւ է երբէք, քան անազան: Լաւ է ուշ, քան երբէք. Բժիշկը դեռ չէր հասել, հիւանդն արդէն մեռած էր: Առաւօտը կանուխ մենք եկեղեցի գնացինք: Յառաջագոյն լսել էինք, որ քահանան քարոզ պիտի կարդայ: Առ այժմ մենք կարիք չ'ունինք. ձեր օգնութիւնը առաջ ուրիշներին հասցրէ՛ք: Նախ մտածի՛ր և ապա խօսի՛ր: Նախ և առաջ նիւթը պատրաստի՛ր և յետոյ գըրի՛ր: Աստուծոյ նախախնամութիւնը յաւիտեան կայ:

121. Հարցերի օգնութեամբ վերոգրեալ վարժութիւնների պարագայական բառերը չորս խումբի

բաժանեցէ՛ք՝ որակական, քանակական, ժամանակական, տեղական, և ձեր յիշատակարանում արտագրեցէ՛ք ապագայի համար:

122. Վերոյիշեալ երէ՛ վարժութիւնները (118, (119, 120) վերլուծեցէ՛ք տրամաբանօրէն և ցոյց տուէ՛ք զլիսաւոր և երկրորդական անդամները) երկրորդական անդամների տեսակները՝ որոշող, լրացնող, պարագայական և, եթէ կայ, բացայայտիչ բառերը: — Բերանացի և ապա գրաւոր:

Աստուած իմ, Աստուած իմ, ինչի թողեցիր ինձ:
Հաւր, հաւր, վիշաբ հողիս իմ ճնշում է չարաչար:

§ 60. Այն առարկայի անունը՝ որին մենք խօսելիս դիմում ենք, նշանակում է ասվում: Կոչական բառերը իրարից և նախադասութեան միւս անդամներից բաժանվում են ստորակէտով: Կոչական բառի առաջին վանկի վերայ շեշտ է դրվում, եթէ նորա նախընթաց բառը շեշտ չ'ունի: Իսկ եթէ կոչականը երկու բառից է, շեշտը դրվում է նախնթաց բառերի վերջին կանկի վերայ:

123. Գտէ՛ք կոչական բառերը: — Աօա՛ դու ինձ, ո՛ստդ վարդի, ո՞ւր ես ծըլել, ո՞ւր ես ծաղկել: Տէ՛ր, օրհնի՛ր իմ ձեռքի վաստակը: Օրհնի՛ր Տէ՛ր, իմ ձեռքի վաստակը: Օրհնի՛ր իմ ձեռքի վաստակը, Տէ՛ր: Ի՞նչ էս խրխնջում, իմ ձի՛՛ եռանդուն:

Քոյրիկ, կանչեց .քաջ պատանին: Ո՛վ լուսին, լուսին, արդէն քանի դար...: Գնա՛, եղբայր, Աստուած քեզ հեռ: Հայրիկ, դարձեալ մի աւաղ թռաւ: Քուն եղի՛ր, բալաս, աչքդ խուփ արա՛: Հազար երանի՛ քեզ, մանո՛ւկ անբիծ, որ շուտ հեռացար դու այս աշխարհից:

ՊԱՐՁ և ՄԻԱՒՈՐԵԱԼ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ.

- ա. Աշակերտը կարդում էր, գրում էր և նկարում:
- բ. Ապակին թափանցիկ է, կոկ և զիւրարեկ:
- գ. Կարապետը, Յովնանէսը և Մկրտիչը գնացին ուսումնարան:
- դ. Արեգակը, լուսինը և աստղերը երկնային մարմիններ են:
- ե. Ուսուցիչը բերեց կապոյտ, կանաչ և կարմիր թանաք:
- զ. Որտորդն սպանեց վայրենի եղնիկ, այծ և կըխտաբ:
- Նուձեղով տուած նախադասութիւնները, մենք նրկատում ենք.
- ա. Առաջին և երկրորդ նախադասութեան մէջ մի ենթակազ մի քանի ստորոգեալներ ունի:
- բ. Երրորդ և չորրորդ նախադասութեան մէջ մի ստորոգեալ մի քանի ենթակազ ունի:
- գ. Հինգերորդ նախադասութեան մէջ մի առարկայի համար գրուած են մի քանի միանման որոշողներ:
- դ. Վեցերորդ նախադասութեան մէջ մի գործողութեան համար գրուած են մի քանի միանման լրացնողներ:
- ե. Այդ նախադասութիւններից իւրաքանչիւրը կա-

րող ենք այնքան նախադասութեան վերածել, որքան կըրկնած անդամ կալ. օրինակ՝ առաջին նախադասութիւնից մենք կըկազմենք՝ 1. Աշակերտը գրում էր: 2. Աշակերտը կարդում էր: 3. Աշակերտը նկարում էր:

§ 61. Այն նախադասութիւնը՝ որի մէջ անդամներից մինը կամ միւսը կըրկնուած է մի քանի անգամ, կոչվում է միաւրեւէ նախադասութիւն:

§ 62. Այն նախադասութիւնը՝ որի մէջ կըրկնուած անդամներ չկան, որ իւր մէջ միայն մէկ միտք է ամփոփում, կոչվում է պարզ նախադասութիւն:

§ 63. Պարզ նախադասութեան մէջ գլխաւոր և երկրորդական անդամները միմեանցից ոչ մի կէտով չեն բաժանվում:

§ 64. Միաւորեալ նախադասութեան մէջ կըրկնուած անդամները միմեանցից բաժանվում են ստորակէտներով: Ստորակէտ չի գրվում և բառից առաջ միայն, եւեւ գոչելու չէ: — Ես գիտեմ և՛ կարդալ, և՛ գրել, և՛ նկարել: — Ես գիտեմ կարդալ, գրել և նկարել:

124. Հետևեալ պարզ նախադասութիւններից կազմեցէ՛ք միաւորեալ նախադասութիւններ: — Յորենն արդէն հասել է. գարին արդէն հասել է: Գետերը սառել են. լճերը սառել են: Խնձորենին ծաղկում է գարնանը. տանձենին ծաղկում է գարնանը: Գորտերը խոնաւ տեղերում են ապրում. դոդոշները խոնաւ տեղերում են ապրում: Բզէզները փնաս են տալիս բոյսերին. թրթուրները փնաս են տալիս բոյսերին: Մոծակները տաք եղանակին են լոյս ընկնում. մլակները տաք եղանակին են լոյս ընկնում: Աղուէսը խորամանկ է. աղուէսը ճարպիկ է: Արջը թանձրամիտ է. արջը դանդաղ կոտ է: Սկիւռը մագլցում է ծառերի վերայ. սկիւռը ցատքոտում է ծառերի վերայ: Շունը մսակեր կենդանի է. կատուն մսակեր կենդանի է: Միծեռնակը տարադնաց թռչուն է. սոխակը տարադնաց թռչուն է: Ջին ընտանի կենդանի է. ձին խոտակեր կենդանի է: Առփն ընտանի կենդանի է. կովը կաթնասուն կենդանի է. կովը չորքոտանի կենդանի է:

125. Կազմեցէ՛ք միաւորեալ նախադասութիւններ: — Գլուխը մարդու մարմնի անդամն է. ձեռները մարդու մարմնի անդամներն են. ոտները մարդու մարմնի անդամներն են: Աշնանը գիւղացին հերկում է օրավարը. աշնանը գիւղացին սերմում է օրավարը. աշնանը գիւղացին ցաքանում է օրավարը: Գիւղացին վազ վեր է կենում. գիւղացին լրացվում է. գիւղացին աղօթում է Աստծուն. գիւղացին ձեռք է առնում իւր ծանր զործը: Գիւղացին

ցին ցորենը կալսեց. գիւղացին հացահատիկները ջուալն ածեց. գիւղացին հացահատիկները ջաղացք տարաւ. գիւղացին ցորենից ալիւր աղաց. գիւղացին ալիւրը տուն բերեց. գիւղացին ալիւրից թածայ հաց թխել տուեց:

126. Հետևեալ միաւորեալ նախադասութիւնները պարզի վերածեցէ՛ք: — Բուն և չղձկը գիշերային կենդանիներ են: Առփը և ձին ընտանի կենդանիներ են: Ջին և շունը մարդու հաւատարիմ ընկերներն են: Այծերն ու ոչխարները մեզ կաթ և միս են տալիս: Խնձորը և տանձը ախորժահամ պտուղներ են: Գազարը, սոխը, սխտորը և բոզկը բանջարանոցի բոյսեր են: Բագերը թռչում են, լողում են և ման են գալիս: Գայլերն զգոյշ են և երկչոտ: Նղջերուն վազում է արագ, խրամաններից ցատքում է համարձակ և գետերից լողալով անցնում է:

127. Հետևեալ զոյգ նախադասութիւններից միաւորեալ նախադասութիւններ կազմեցէ՛ք, կապելով նոցա՝ Բայց, այլ բառերով: — Կէտը կաթնասուն կենդանի է. կէտը չորքոտանի է: Նրկիրն է շարժվում. արեգակը չի շարժվում: Աշտանալու համար չի կծում օձը. շարութեան համար է կծում օձը: Լուսինը լուսաւորում է. լուսինը չի տաքացնում: Յորենը գեղեցիկ է. ցորենն օգտակար է: Մանուկն ընդունակ է. մանուկը ծոյլ է: Աստուած երկար է սպասում. Աստուած խիստ է պատժում: Նղէզը

քամու ճնշումից կռանում է. եղէզը քամու ճնշումից չի կոտրվում: Տանձը համեղ է. տանձը թանգ չէ: Ոսկին փոքր է. ոսկին թանգ է: Կուր գետը մեծ չէ. Կուր գետը օգտակար է: Էջմիածինը հեռու է. Էջմիածինը մեր սրտին մօտ է: Անին կործանուած է. Անին սիրելի է: Կայծակը զարհուրելի է. կայծակը օգուտ է: Գործելուց մի՛ վախենար. անգործութիւնից վախեցիր: Չարութեանը չարութեամբ մի՛ պատասխանիր. չարութեանը բարութեամբ պատասխանիր: Քեզնից խնդրողին մի՛ մերժիր. քեզնից խնդրողին օգնիր:

ԲԱՂԱԴՐԵԱԼ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ.

ա. Ներսէսը՝ որ մեր նշանաւոր հաւուսեցիներից մէկն էր, շատ լողօգուտ գործեր է կատարել:

բ. Կան աջնախի մարդիկ, որոնք երանց պարսկական-բեհ-նը որբու-բեհմբ չեն հարարում:

գ. Ես կատարում եմ, ինչ որ ինչ անջնում էն:

դ. 1. Ո՛ւր որ փէշն է, աջնակը արծիւներ են ժողովում:

2. Բոցերը զուարթանում են, էբբ որ աջնու է փռւում:

3. Մանուկներն աշխատեցին, որտե՛ս կարողացան:

4. Դու կրպատժուիս, ինչպէ՛ս պարծւում էն ճորչ հաւուսեցիները:

5. Ես աշխատում եմ, որպէ՛ս լին շուս մարդ տանում:

Վերադառալ նախադասութիւններից իւրաքանչիւրը երկու մասից է բաղկացած, որոնցից ամէն մի մասն առանձին նախադասութիւն է և ունի իւր գլխաւոր և երկրորդական անդամները: Այդ երկու նախադասութիւններից միին անկախ է, ինքն իրան պարզ և որոշ հասկացվում է, իսկ միւսը՝ որ մենք բաժնած ենք ճշանակել, կախումն ունի առաջինից և առանց նորան պարզ չի հասկացվում: Նօտրապիր նախադասութիւնները, ընդհակառակն, զրուել են միւս նախադասութիւնների միտքը պարզաբանելու համար: Այժմ անկախ նախադասութիւններին հարց տանք, մենք կրտսնենք, որ նօտրապիր նախադասութիւնները ճիշտ այն հարցերին կրպատասխանեն, որոնց պատասխանում են պարզ նախադասութեան երկրորդական անդամները:

§ 65. Ենթական, ստորոգեալը, որպէս և նախադասութեան միւս անդամները, կարող են պարզաբանուել ոչ միայն առանձին բառերով, այլ և ստորոջ նախադասութիւններով:

Այն նախադասութիւնը՝ որ պարզաբանում է միւս նախադասութեան որեւիցէ մի անդամին, կոչվում է երկրորդական նախադասութիւն:

Այն նախադասութիւնը՝ որից երկրորդականը կախումն ունի, կոչվում է գլխաւոր:

Գլխաւոր և երկրորդական նախադասութիւնը միասին կոչվում են քաղաքեալ նախադասութիւն:

§ 66. Երկրորդական նախադասութիւնը գլխաւորից բաժանվում է ստորակէտով, իսկ եթէ երկրորդականն ընկած է գլխաւոր նախադասութեան անդամների մէջը, ապա բաժանվում է երկու ստորակէտով, երբեմն էլ բութ և ստորակէտով:

§ 67. Երկրորդական նախադասութիւնները, իրանց կատարած պաշտօնին նախելով, լինում են՝ բացալայտիչ, որոշող, լրացնող և սլարապայական:

128. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէ՛ք երկրորդականները՝ հարց տուէ՛ք և լուծեցէ՛ք՝ որոշելով՝ թէ գլխաւոր նախադասութեան ո՛ր անդամի համար են դրուած:— Երուսաղէմի դռները փակում են, երբ արեգակը մայր է մոնում: Երբ որ հասկերի մէջ ցորենի հատիկներն ամրանում և մրգանում են, այն ժամանակը հնձում են: Երբոր վառարանի կրակը մոխրով ծածկվում է, ապա ծածկում են ծխնելոյզը: Մեր նախահայրերն ապրում էին այնտեղ, որտեղից բղխում են Տիգրիս և Եփ-

բացալայտիչ

րաս գետերը: Այնտեղ է մարդկութեան օրօրոցը, ուր բարձրանում է ծերունի Արարատը: Աբրահամը իւր գերդաստանով գաղթեց այն աշխարհը, ուր Տէրը հրամայել էր նորան: Սառն բամբները գալիս են այնտեղից, ուր տարածուած է Վառուցեալ ովկիանտը: Սոխակը երգում էր այնպէս, որ աշխարհ ամենայն նորան էր լսում: Առիւծն այնպէս մենչաց, որ բոլոր գազանները սարսեցան:

129. Որտորչն ունի մի հրացան, որը շատ ճիշդ է զարկում նպատակին: Ծառի վերայ թառած էր մի թռչուն, որի փետուրները գեղեցկապէս փայլում էին: Փոքրիկ ձուտերը, որոնք դեռ ևս չ'գիտէին իրանց թևերի ոյժը, զարհուրական ձայներ էին բարձրացնում: Աշխատասէր մեղուն, որ ծաղիկներից իրան համար մեղր էր հաւաքում, ծանրաբեռնուած թռաւ դէպի փեթակը: Ի՛նչ ախորժալուր է հովուական սրնդի ձայնը մայիս ամսին, երբ նա մի քարի վերայ նստած՝ սուլում է ինքնագոհ: Կուք չ'կարծէք, թէ նա միայն իւր սրտի ուրախութեան համար է ածում. նա դորանով հասկացնում է իւր հօտին, թէ ժամանակ է ժողովուիլ իւր չորս կողմը և գնացքն ուղղել դէպի փարախը, ուր սիրունիկ գառներն ապաստում են նրանց:

130. Հայերը՝ որ աշխարհիս ամենահին ազգերից մինն են, մի ժամանակ ունեցել են շատ քաղաքներ: Անի քաղաքը, որ իւր աւերակներովն անգամ սքանչելի է, ունեցել է հոյակապ ձարառ-

արուեստ շէնքեր: Տիգրան Բ.՝ որից զողում էին հին ժամանակուայ հզօր սպգերն անգամ, ցաւալի վաւ-
ճան քենեցաւ: Նփրասն ու Տիգրիսը այն զետերն
են, որոնք բոխում էին զրախաից: Մասիսը՝ որի
զագաթը միշտ ծածկուած է ձիւնով, գտնվում է
Նրեանի և Նջմիածնի հանդէպը:

131. Գնանք ժողովներ զաշտերից, ինչ որ Ա-
րարիչը պարգևեւ է մեզ: Ան աշխարհի տեղեր, ուր
ի հնուց բոյսերի փաւրուց սեւհող է զոյսոցել: Ա-
ռաւօար, երբ անկողնիցդ վեր ես կենում, հազար
սարի ծայրից ամպն ու ծուխը երկինք են բարձ-
րանում: Գրախա ես ուզում, այստեղ կա՛ց, այստեղ
կա՛ց: Նրբ սարումը հիւր է պատահում, էլ շարա-
թով ու ամսով չեն թողնում, որ հեռանայ:

§ 68. Երբեմն խօսող անձը՝ իւր ա-
սածներին որպէս հաստատութիւն, բերում
է ուրիշների սասած բառերը նոյնութեամբ:
Ան նախագատութիւնը՝ որ ուրիշի խօս-
քերից է կադմուած, կոչվում է յաւելաւ նա-
խադասութիւն:

§ 69. Յաւելեալ նախադասութիւնից
յետոյ գրվում է միջակէտ և երկու կող-
մից չակերտներ: Երբ որ մի քանի ան-
ձանց խօսակցութիւն է պատմվում, այն

ժամանակ մէկի ասածից առաջ դնում են
չակերտներ, իսկ միւսինի առաջ՝ ենթամտայ
(a , — e) և չակերտ:

132. Ահտերը և հարկաւոր նշանները զրէ՛ք:
— Երբոր հայ նախարարները կամենում էին իրանց
թագաւորից բողբել պարսից արքային, եկան Ս.
Սահակի մօտ և առաջարկեցին, որ նա էլ միաբա-
նի իրանց հետ: Արժանապատիւ հայրապետը պա-
տասխանեց Նրբէք ես չեմ փոխարինիլ իմ հի-
ւանդ ոչխարը ուրիշի առողջ զազանի հետ:

Յիսուսը, երբ վերջին զիշերը գնում էր աղօթք
անելու, ասաց իւր աշակերտներին Արթուն կացէ՛ք
և աղօթեցէ՛ք, որ փորձութեան մէջ չ՛ընկնիք:

Գարունն ասաց Նս եմ զիւղացուն հաց
սուտողը:

Ամառը պատասխանեց Չես կարող տալ, եթէ
ես չ՛կամենամ:

Գիւղացին մտածեց ինքն իրան Ամենայն ինչ
Աստուծոյ ձեռքին է:

§ 70. Եստ անգամ նախադասու-
թեան անդամների մէջ մտնում է մի ա-
ռանձին նախադասութիւն, որ ամենեւին
կապ չունի գլխաւոր նախադասութեան
հետ և կարող է՝ առանց մտքի պարզու-
թեանը խանգարելու, դուրս ձգուիլ: Այդ-

պիսի նախադասութիւնը կոչվում է Տիջանկէալ:

— Գուք, երեւի, շուտով կրվերադառնաք քաղաքից: Մենք, շատ հաւանակտն է, ամենեւին չ'վերադառնանք:

§ 71. Շատ անգամ բաղադրեալ նախադասութիւնը կարող է կազմուած լինել մի քանի ընդարձակ պարզ նախադասութիւններից՝ համար նշանակութեամբ: Համալոր նախադասութիւնները բաժանվում են միմեանցից միջակէտով, իսկ եթէ շատ համառօտ են, ստորակէտով են բաժանվում:

- 133. Գալիս է ամառ, այրող եղանակ, Անխոնջ վաստակի պողի ժամանակ, իւր աստուածեղէն ջերմութեան հողին կենսատու շնչով ծաւալէ արփին. Հասել է ծիրան, տանձը մեղրածոր. Կարմիր վարդի պէս փայլում է խնձոր. Սաթանման զեղին կախուած է ողկոյզ. Մանկտին գրաւում է շրոր, նուռ և թուզ. Սեխով, ձմերկով լինէն է բուրաստան. Ոսկեայ հոսանքով ծփի անդաստան. Եւ արտօրայքի ծանրացած հասկեր, Խիստ հիանալի նկարեն պատկեր:

§ 72. Երբոր գլխաւոր նախադասութիւնից վտոյ գալիս է միաւորեալ նախադասութիւն, որի կրկնուած անդամները մի տեսակ համրանքի ձև են ընդունում, այն ժամանակ այդ երկու նախադասութիւնների մէջ բովթ (') է դրվում: — Գիւղացին քաղաքում շատ իրեղէններ գնեց՝ շաքար, թէյ, շորեղէն, կաւեղէն, պղնձեղէն և ուրիշ տնային պարագայք:

§ 73. Բաղադրեալ նախադասութիւնը միաւորեալից և միաւորեալը բաղադրեալից բաժանվում է միջակէտով:

134. Հետեւեալ նախադասութիւնները կարգացէք մինչև վերջակէտը, գլխաւոր մասերն անջատեցէք իրարից և նախադասութեան ամէն մի մասն առանձին առնելով՝ լուծեցէք ներքև դրած օրինակին պէս:

Կանայքը կթի կովերն են բերում, կաթը ժողովում, իւր ու պանիր շինում. աղամարդիկ տաւարը սարն են քշում կամ բուրդ ու իւրը տանում փողոցը՝ ծախում, իրանց տան պակասութիւնը լրացնում: Միայն այս չէ կանանց գործը. ցերեկը ձախարակ են մանում ջալ, գորգ կամ կապերա են գործում և իրանց օրն ուրախ, միամիտ անցկացնում: Եւ ի՛նչ տակ կ'ուզէ, որ հարս ու

աղջիկ այստեղ կուճ' ու ձիգ անելով չեն ման գալիս և երեսները չեն կախում, ինչպէս տանը: Մէկ տան պէս են, և ում' օբէն (վրանը) մանեա) ամենքը առողջ, ուրախ և զուարթ են. այն օդի ու ջրի, այն ծաղկի ու կանաչի հոտն ու համն առնողն հոգին ու զոյնը ի՞նչ կրլենի ապա: Երբ սարումը հիւր է պատահում, էլ շարաթով ու ամսով չեն թողնում, որ հեռանայ. աղբիւրները քչքչոյք ջրերի խշխշոյք, ծառերի սլսլոյք, թռչունների ծղվոցք, հովուի սրինգը, գառան, ոչխարի ու տաւարի բռռաչք՝ կարծես, ձեզ ատում են. «Կրբախոս ևս ուզում, այստեղ կա՛յ, այսպէս կա՛յ, սիրող անմեղ միտքդ խտակ»:

Մինչ և առաջին վերջապէտը. — բարդ նախադասութիւն է երկու մասից բաղկացած, երկուսն էլ միաւորեալ. առաջին մասը բաղկացած է հետեւեալ նախադասութիւններից. «կանաչքը կթի կովերը բերում են, կանաչքը կաթն են ժողովում, կանաչքը իւղ են շինում, կանաչքը պանիր են շինում»): Երկրորդ մասը բաղկացած է հետեւեալ նախադասութիւններից. «տղամարդիկը տաւար սարն են քչում, տղամարդիկը բուրդը տանում են փողոցը, տղամարդիկը իւղը տանում են փողոցը, տղամարդիկը բուրդն ու իւղը ծախում են, տղամարդիկն իրանց տան պակասութիւնը լրացնում են»):

Այսպէս բաժանեցէք բոլոր նախադասութիւնները և ապա իւրաքանչիւրն առանձին լուծեցէք. (Կոնայք ենթակալ, Բերո՛ւ՛՛ են ստորոգեալ, Կովերը լրացնող, Կէն որոշող բառ): Առաջին ձևով լուծելուց յետոյ նորից կարգացէք բնագիրը և բարդ նախադասութեան առաջին և երկրորդ կէսերը միանգամից լուծեցէք հարցերով և առանց հարցերի. (Կոնայք ենթակալ, Բերո՛ւ՛՛ են, Ժողովո՛ւ՛՛, շինո՛ւ՛՛ ստորոգեալ, Կովերը, Կոնայք, Իւղ ու պանիր լրացնող բառեր, Կէն որոշ բառ):

ՀՀ Ազգային գրադարան



NL0695990

ՀՀ Ազգային գրադարան



NL0685875

270.

